

Միւհիսի Եռակողմ Հանդիպման Ընթացքին Քննարկուեցաւ Խաղաղութեան Պայմանագրի Նախագիծին Շուրջ Աշխատանքներու Ընթացքը

Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Էնթոնի Պրինքընի միջնորդութեամբ Միւհիսի մէջ հանդիպած են Հայաստանի ու Ատրպէյճանի ղեկավարները:

Հայաստանն ու Ատրպէյճանը աւելի քան 30 տարի տեւող հակամարտութենէ յետոյ ամուր խաղաղութիւն ապահովելու պատմական հնարաւորութիւն ունին. այս մասին յայտնած է ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Պրինքընը՝ Միւհիսի մէջ Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներուն հետ հանդիպման ժամանակ:

Հանդիպման մեկնարկին Էնթոնի Պրինքընի բացման խօսքը հրապարակուած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան կայքին մէջ:

«Կը փափաքեմ շնորհակալութիւն յայտնել նախագահ Ալիեւին եւ վարչապետ Փաշինեանին այստեղ ըլլալու համար: Մենք կը հաւատանք, որ Հայաստանն ու Ատրպէյճանը աւելի քան 30 տարի տեւող հակամարտութենէն յետոյ ամուր խաղաղութիւն ապահովելու իրապէս պատմական հնարաւորութիւն ունին: Կողմերը իրենք կեդրոնացած են խաղաղ գործընթացի վրայ երկկողմ երկխօսութեամբ, ինչպէս նաեւ ԵՄ-ի ու մեր հետ: ԱՄՆ պատրաստ է ընելու ամէն հնարաւորը այդ ջանքերուն աջակցելու համար՝ ըլլալ այդ ուղղակիօրէն մեր բարեկամներուն, թէ՛ եռա-



Փաշինեան-Պրինքըն-Ալիեւ հանդիպումը Միւհիսի մէջ

կողմ ձեւաչափով, ինչպիսին այս հանդիպումն է կամ միջազգային այլ գործընկերներու հետ: Բացի այդ շնորհակալ եմ թէ՛ նախագահին, թէ՛ վարչապետին ներկայութեան համար եւ կ'ակնկալեմ լաւ խօսակցութիւն»:

Հայաստանի կառավարութեան փոխնախարար Էնթոնի Պրինքընի խօսքէն ետեւ ընթացքին քննարկած են Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի նախագիծի աշխատանքներուն ընթացքը:

Տարածաշրջանային ճանապարհային ենթակառուցուածքներու ապաշրջափակումն ու երկու

երկիրներուն միջեւ սահմանագաման հարցերը եղած են օրակարգին վրայ: Անոնք քննարկուած են Փրանկի մէջ ձեռք բերուած պայմանաւորութիւններու ծիրին մէջ:

Ըստ հայկական կողմին՝ վարչապետ Նիկոլ Փաշինեան վերահաստատած է Հայաստանի նպատակամղուածութիւնը՝ հասնելու այնպիսի պայմանագրի ստորագրման, որ իսկապէս կ'երաշխաւորէ տարածաշրջանին մէջ երկարաժամկէտ խաղաղութիւնն ու կայունութիւնը:

Փաշինեան ընդգծած է նաեւ

Շար.ը էջ 4

Մենք Պիտի Շարունակենք Ըլլալ Հայաստանի Եւ Ին Ընկերոջ՝ Նիկոլ Փաշինեանի Կողքին-Էմանուէլ Մաքրոն



Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն

Միւհիսի Անվտանգութեան Համաժողովին ունեցած իր ելոյթին մէջ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն յայտնած է, որ պիտի շարունակէ ըլլալ Հայաստանի եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողքին:

Մաքրոնի ելոյթին հիմնական մասը վերաբերած է ռուս-ուքրանական հակամարտութեան, սակայն Ֆրանսայի նախագահը նաեւ անդրադարձած է Հարաւային Կովկասի

Շար.ը էջ 6

Խուճը Սը Երիտասարդներ Մուտք Գործեցին ՍԴՀԿ-ի Շարքերը

ԱՄՆ-ի Արեւմտեան շրջանի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան վարիչ Մարմնի հովանաւորութեամբ, անցեալ Ուրբաթ Փետրուարի 17-ին, 2023, Փասատինայի ՀԿԲՄ-ի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ խուճը մը երիտասարդներու կուսակցական շարքերուն միանալու երզման արարողութիւնը: Արդարեւ, «ուխտեալ երիտասարդներ»ը շրջանէ մը ի վեր, լսարանային դասախօսութիւններու միջոցաւ, մօտէն ծանօթացած էին Մայր Կուսակցութեան համառօտ պատմութեան, անոր առողջ գաղափարախօսութեան տեսլապատ ուղեգիծին, ի խնդիր ազատատենչ հայ ժողովուրդի ազատ եւ ինքնավար կեանքի իրագործումին:

Սոյն միջոցառումին ներկայ էին ՍԴՀԿ վարիչ Մարմնի անդամներ, Կեդրոնական վարչութեան եւ ինչպէս նաեւ մասնաճիւղերու վարչութեանց եւ ՀԱԽ-ի ու «Կայծ» երիտասարդացի ներկայացուցիչներ:

Օրուան գլխաւոր բանախօսն էր՝ ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի ատենապետ՝ Ընկ.



Վազգէն Խոտանեան: Ան հանգամանօրէն արդարադարձաւ Հնչակեան Կուսակցութեան գաղափարախօսութեան հիմնական նպատակներուն եւ մերօրեայ պարտաւորութիւններուն վրայ: Առանձնապէս նշեց նաեւ կուսակցութեան դրօշի ու գինանշանի իմաստն ու խորհուրդը: Միաժամանակ մէջբերումներ կատարեց ՍԴՀԿ-ի կազմական կանոնադրէն կարեւոր հատուածներ, որոնք պիտի ծառայեն որպէս գլխաւոր ուղեցոյց նորամուտ շարքայիններուն: Ապա շնորհաւորեց նոր

Շար.ը էջ 6

Հայաստանի Արտաքին Գործերու նախարար Արարատ Միրզոյեանը Այցելեց Թուրքիա



Արարատ Միրզոյեանի եւ Մելուք Զաւուշօղլուի հանդիպումը Անգարայի մէջ

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի գլխաւորած պատուիրակութիւնը այցելած է Թուրքիոյ Ատրլաման քաղաք, ուր որոնողափրկարարական աշխատանքներ կ'իրականացնեն հայ փրկարարները: Օղակայանին մէջ ՀՀ արտաքին գործերու նախարարին դիմա-

ւորած է Ատրլամանի մէջ միջազգային որոնողափրկարարական խումբերու աշխատանքները համակարգող, դիւանագետ ձերեն Եազկանը:

Անգարայի մէջ կալաքած հանդիպումի աւարտին Թուրքիոյ ար-

Շար.ը էջ 6

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Երբ Փակուած Է Արցախի «Կեանքի Գանապարհը»

Որքանով Է Տեղին Կամ Արդարացի Խօսել Տարածաշրջանային Հաղորդակցութեան Ուղիների Ապաշրջափակման Մասին

ԱՐՄԵՆ ՎԱՐՂԱՆԵԱՆ

Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի կապակցութեամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի այցն Անքարա պէտք է օրինաչափօրէն յայտնուեն միջազգային կառուցների, ուժային կեդրոնների ուշադրութեան դաշտում եւ որոշակի արձագանքներ ունենար: Ֆրանսայի ԱԳՆ-ն յայտարարութիւն տարածեց, որով որջուռնեց այցը՝ շեշտելով, թէ այդ երկիրն աջակցում է հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը: Ռուսաստանից այցին անդրադարձաւ ՌԴ ԱԳՆ-ի միջազգային յարաբերութիւնների ՄՊԻ-ի միջազգային հետազոտութիւնների ինստիտուտի եւրատլանտեան անվտանգութեան կեդրոնի առաջատար գիտաշխատող Սերգեյ Մարկեղոնովը: Վերջինս այն տեսակէտը յայտնեց, թէ Թուրքիային ցուցաբերած օգնութեան ֆոնին երկրների ԱԳ նախարարների հանդիպումների արարողակարգային հարցերն արդիւնաւէտ կը քննարկուեն, բայց դրանց յաջորդելու է Լաչինի միջանցքի եւ հայ-ատուրպէյճանական հարցերի քննարկումը, որի արդիւնաւէտ լինելու համար պէտք է որոշակի արդիւնքներ արձանագրուեն կողմերի համար եւ միայն այդ դէպքում այցը կարող է լինել պատմական:

Յայտնի փաստ է, որ Ռուսաստանը կողմ է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների կարգաւոր-

մանը, յամենայնդէպս՝ հնչող պաշտօնական յայտարարութիւնների մակարդակում, առաւել եւս, վերջին տարիներին Մոսկուա-Անքարա շերտացած յարաբերութիւնների պայմաններում, բայց ՌԴ ԱԳՆ-ի ներկայացուցիչն իր դատողութիւնները փորձում է կառուցել առկայ փաստերի վրայ, որոնք միանշանակ լուծման կարիք ունեն:

Միրզոյանի եւ Չաուշօղլուի համատեղ ասուլիսից կարելի է ենթադրել, որ հիմնական բանակցութիւններն ընթացել են Հայաստան-Թուրքիա սահմանի եւ տարածաշրջանում ընդհանրապէս հաղորդակցութեան ուղիների բացման շուրջ: Այստեղ անխուսափելիօրէն քննարկուել է Լաչինի միջանցքի փակ լինելու հիմնահարցը, որն Արցախում հումանիտար ճգնաժամի պատճառ է դարձել: Թուրքիայի արտգործնախարարը հիմնական շեշտադրումն անում է հայ-թուրքական սահմանի բացման հարցերի վրայ՝ «Մետաքսի ճանապարհի» համատեքստում դիտարկելով Անիի պատմական կամրջի վերականգնումը:

Չաուշօղլուի յայտարարութիւնից կարելի էր ենթադրել, որ խօսքը հայ-թուրքական սահմանի լիարժէք բացման ուղղութեամբ կատարուելիք աշխատանքների մասին է: Սակայն արդէն օրուայ վերջում Թուրքիայի յատուկ ներկայացուցիչ Քըլլըջը յայտարարեց, թէ խօսքը երրորդ երկրների քաղաքացիներին Հայաստան-Թուրք-

իա սահմանը հատելու հնարաւորութիւն տալու մասին է: Կառավարութեան նիստում նոյնը կրկնեց նաեւ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը՝ յայտնելով, որ մինչեւ զբօսաշրջութեան մեկնարկն աշխատելու են աւարտին հասցնել երրորդ երկրների քաղաքացիների եւ երկու երկրների դիւանագիտական անձնագրեր ունեցող քաղաքացիների համար ցամաքային սահմանի բացումը:

Թուրքիայի ԱԳ նախարարը նաեւ շեշտադրեց ութընասական համարտութեան ֆոնին, իր ձեւակերպմամբ, «Միջին միջանցքի» գործարկման կարեւորութիւնը Ասիան եւրոպային միացնելու հարցում՝ պնդելով, որ այն կը նպաստի տարածաշրջանի բոլոր երկրների տնտեսութիւնների զարգացմանը: Բարձրաստիճան դիւանագէտը փաստօրէն խօսում է տարածաշրջանի հաղորդակցութեան ուղիների բացման մասին այն դէպքում, երբ իր երկիրը «կրտսեր եղբայրը» փակ է պահում Արցախի Հանրապետութեան «կեանքի ուղին»՝ հումանիտար ճգնաժամի առաջ կանգնեցնելով մի որջ ժողովրդի, կաթնուածահար անելով հանրապետութեան տնտեսական, առողջապահական, կրթական ոլորտները:

Միւս կողմից էլ փաստ է, որ տարածաշրջանում յարաբերութիւնների կարգաւորումը համալիր բնոյթ է կրում, խնդիրները փոխկապակցուած են միմեանց, եւ այդտեղ առաջընթաց ապահովելու

համար անհրաժեշտ են նպաստող նախադրեայնքներ, համապատասխան միջոցառում: Այսօր ասել, թէ Արցախը շրջափակման ենթարկելու Պաքուի գործողութիւնները նպաստում են տարածաշրջանային կառուցողական երկխօսութեանը, անհեթեթ կը լինէր, իսկ Ատրպէյճանի վրայ ներազդելու միջոց Թուրքիան միանշանակ ունի:

Որքան էլ փորձ արուի Արցախում ստեղծուած իրավիճակը տարանջատել հայ-թուրքական յարաբերութիւններից, հնարաւոր չի լինի, քանի որ խնդիրը որջ տարածաշրջանի հաղորդակցութեան ուղիների բացման եւ յարաբերութիւնների հաստատման մասին է, առաւել եւս, որ պաշտօնական Անքարան մշտապէս ակնարկել է, որ հայ-թուրքական յարաբերութիւնները պայմանաւորում է Երեւանի եւ Պաքուի յարաբերութիւնների կարգաւորմամբ:

Հետեւաբար, տարածաշրջանում յարաբերութիւնների հաստատման ուղղութեամբ իրական քայլեր կատարելու եւ արդիւնքներ հաստատելու համար պէտք է յայտարարութիւնները համահունչ լինեն գործողութիւններին, իսկ Պաքուի գործողութիւնները չեն տեղաւորում այդ տրամաբանութեան մէջ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

Ալիւն Ընդամէնը Օգտուել Եւ Օգտուում Է. Հայաստանի Ժողովրդի Գերխնդիրը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱՆԵԱՆ

Միւսիսնի անվտանգութեան համաժողովի շրջանակում կազմակերպուած «կովկասեան պանելային քննարկման» ընթացքում, Պաքուի ղեկավար Իլհամ Ալիւեւը խօսեց Հայաստանի «կապիտուլիացիայի» մասին, նշելով, թէ դա ընդունել է ոչ միայն միջազգային հանրութիւնը, այլ նաեւ Հայաստանի հանրութիւնը՝ 2021 թուականին ընտրելով պատերազմից հետ «կապիտուլիացիան» ստորագրած իշխանութեանը: Սա իհարկէ կովկասեան «պանելի» քննարկման այսպէս ասած ամենացաւոտ հատուածն է առաջին հերթին բարոյական իմաստով, քանի որ Ալիւեւը յայտարարում է, որ Հայաստանի ժողովուրդը ընդունել է կապիտուլիացիան: Մի կողմ թողնենք Նիկոլ Փաշինեանի արձագանքի հանգամանքը:

Խնդիրը պէտք է դիտարկել թերեւս խորութեան մէջ: 44-օրեայ պատերազմից յետոյ Հայաստանում ձեւաւորուած հասարակական-քաղաքական «դիսկուրսի» առանցքում դրուեց հենց դա, «կապիտուլիացիան» դարձաւ Նիկոլ Փաշինեանին քաղաքական հարուած հասցնելու առանցքային «գործիք»: Երբ Հայաստանի ներսում մօտ երկու տարի շարունակ, ու մինչ այսօր նաեւ, «կապիտուլիացիան» հարուածային գործիք է, ինչու՞ դրանից չպէտք է փորձի օգտուել հակառակորդը կամ թշնամին, ընդ որում ոչ միայն տուեալ՝ «պանելային» իրավիճակում եւ

դրա հաշուարկով, այլ թերեւս նաեւ Հայաստանի այսպէս կոչուած ներքաղաքական կեանքի վրայ, հանրային օրակարգի վրայ ազդեցութեան հաշուարկով: Առաւել եւս, որ Ատրպէյճանի առնուազն այդ հաշուարկները արդարանում են գրեթէ միշտ: Եթէ Ալիւեւի որեւէ յայտարարութիւն որեւէ այլ ուղղութեամբ չունենայ յաջորդութիւն, ներհայաստանեան ուղղութեամբ «ընկալման» յաջողութիւնը նրա համար գրեթէ երաշխաւորուած է:

Պէտք է արձանագրել նաեւ, որ «երաշխաւորները» այդ իմաստով Հայաստանի ներքաղաքական եւ տեղեկատուական դաշտի խաղացողների գերակշռող մեծամասնութիւնն է, այդ թւում նաեւ քաղաքական մեծամասնութիւնը, որը գործնականում առ այսօր որեւէ հիմնարար ու համակարգային աշխատանք չի կատարել ու չի կատարում Հայաստանում տեղեկատուաբարողչական միջավայրում որակական փոփոխութեան գոնէ հիմքեր գցելու եւ ինստիտուցիոնալ արդիականացման նախադրեայ ստեղծելու համար: Ալիւին, մեծամասնութիւնն իր հերթին օգտուում է ընդդիմութեան տեղեկատուաբարողչական ոչից եւ փորձում դրանից բուժեբանագի էֆեկտ ստանալով լուծել իր ներքին խնդիրները: Իսկ հայ ժողովուրդը, Հայաստանի հանրութիւնը չի համակերպուել «կապիտուլիացիայի»: Եւ ոչ թէ այն պատճառով, որ գործող իշխանութեանն ընտրել է ընդամէնը նախկին իշխանութեան վերա-

դարձ թոյլ չտալու համար: Պարզապէս, Հայաստանի ժողովուրդը չի համակերպուել մի բանի հետ, որի գոյութիւնը չի ընդունել: Հայաստանի ժողովուրդը այո, արձանագրել է, որ եղել է պատերազմի պարտութիւն, ծանր եւ ցաւազին՝ իր լաւագոյն զաւակների կորստով, տարածքային կորուստներով, ահռելի մարտահրաւէրներով, Արցախի համար ծանրագոյն հետեւանքով, բայց այդ ամէնով հանդերձ Հայաստանի ժողովուրդը դա համարում է պարտութիւն, այլ ոչ «կապիտուլիացիա»: Եւ այն, որ դա պարտութիւն է, բայց ոչ «կապիտուլիացիա»՝ գործնականում արձանագրուած է հենց Նոյեմբերի 9-ի յայտարարութեան տեքստում: Այն պարտութեան հետեւանք է, սակայն իր մէջ պարունակում է նաեւ Ատրպէյճանի պարտութեան տարրեր: Պարտութիւն իհարկէ ոչ Հայաստանի կամ Արցախի, այլ որոշակիօրէն Ռուսաստանի նկատմամբ, բայց դա է Նոյեմբերի 9-ի փաստաթուղթը, ոչ թէ «կապիտուլիացիա»: Ու Ալիւեւը անշուշտ քաջ գիտակցում է դա, ինչի համար էլ երկու տարի հետեւողականօրէն փորձում է փոխել այդ փաստաթղթի տրամաբանութիւնն ու տառը: Իսկ հայ ժողովուրդը 2021 թուականի Յուլիսին կայացրել է ոչ թէ ընտրութիւն «կապիտուլիացիայի» եւ «չկապիտուլիացիայի» միջեւ, այլ փաստացի արձանագրել է, որ Հա-



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅԱՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Մէջ Իր Աշխատանքը Ակաած Է ԵՄ Քաղաքացիական Առաքելութիւնը՝ Կազմուած Շուրջ 100 Անդամէ



ԵՄ քաղաքացիական առաքելութեան անձնակազմը Վայոց Ձորի մարզի մէջ

Եւրոմիութիւնը Փետրուարի 20 Հայաստանի մէջ սկսած է ԵՄ քաղաքացիական առաքելութիւնը՝ Համընդհանուր անվտանգութեան եւ պաշտպանութեան քաղաքականութեան ծիրին մէջ: ԵՄ-ն այս մասին տարածած է մամուլի հարցազրույցները:

Հարցազրույցներն մէջ կը նշուի, որ առաքելութիւնը պաշտօնապէս ստեղծուած է Խորհուրդի՝ 23 Յունուար 2023-ի որոշմամբ:

«Հայաստան-Ատրպէյճան սահմանի հայկական կողմը տեղակայման նպատակն է նպաստել Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ կայունութեան, հակամարտութեան տուժած շրջաններուն մէջ կառուցել վստահութեան եւ անվտանգութեան, ինչպէս նաեւ ապահովել միջավայր, որ պիտի նպաստէ Հայաստանի եւ Ատրպէյճանի

միջեւ կարգաւորման ջանքերուն, որուն կ'աջակցի ԵՄ-ն», նշուած է հարցազրույցներն մէջ:

ԵՄ-ն կը յաւելնէ, որ, ընդհանուր առմամբ, ԵՄ առաքելութեան՝ բացառապէս քաղաքացիական անձնակազմի կազմին մէջ ընդգրկուած պիտի ըլլայ մօտաւորապէս 100 մարդ, այդ շարքին՝ շուրջ 50 անգէն դիտորդ:

Առաքելութեան շտաբը պիտի գտնուի ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքին մէջ: Եւրոպայի Արտաքին Գործողութիւններու Ծրագրութեան Քաղաքացիական Ծրագրաւորման եւ Վարման Կարողութիւններու (CPCC) գործադիր տնօրէն Սթեֆանօ Թոմատը պիտի աշխատի որպէս քաղաքացիական գործողութիւններու հրամանատար, իսկ Մարքուս Ռիթըրը՝ որպէս առաքելութեան ղեկավար:

Մարիա Զախարովան Անդրադարձած Է Հայաստանի Մէջ ԵՄ Քաղաքացիական Դիտորդական Առաքելութեան

Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան անդրադարձած է Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ ԵՄ քաղաքացիական դիտորդական առաքելութեան աշխատանքներու մեկնարկին՝ պատասխանելով լրագրողի հարցումին:

Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան պաշտօնական կայքէջին մէջ գետեղուած հարցազրույցներն մէջ կ'ըսուի, որ լրագրողը հնչեցուցած է հետեւեալ հարցը. «Փետրուար 20-ին Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ Եւրոմիութեան քաղաքացիական դիտորդական առաքելութիւնը սկսած է իր աշխատանքը: Ի՞նչ կ'ընաք ըսել այս մասին»:

«Ընդգծելով նոր առաքելութեան բացառապէս քաղաքացիական բնույթը՝ Եւրոմիութեան ներկայացուցիչները անագնիւ են: Այն կը ծառայի ԵՄ ընդհանուր անվտանգութեան եւ պաշտպանութեան քաղաքականութեան շուրջ, հետեւաբար անհրաժեշտ է համապատասխանաբար վերաբերիլ անոր: Աւաղ, առաջին անգամ չէ, որ կ'արձանագրենք ԵՄ եւ ամբողջ Արեւմուտքի՝ մեր դաշնակից Հայաստանի մէջ որեւէ կերպ ամրանալու ցանկութիւնը:

Այդ փորձերուն մէջ մենք կը տեսնենք բացառապէս աշխարհաքաղաքական ենթագիր, որ հեռու է Անդրկովկասի մէջ յարաբերութիւններու իրական կարգաւորման շահերէն: Ամէն ինչ կը կատարուի Ռուսիան տարածաշրջանէն դուրս մղելու եւ անվտանգութեան



Ռուսիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան ներկայացուցիչ Մարիա Զախարովա

գլխաւոր երաշխաւորի անոր պատմական դերը թուլցնելու համար: Այս նախաձեռնութեան վերաբերեալ Պաքուի՝ հրապարակայնօրէն արտայայտուած բացասական զնահատականները կ'անտեսուին», պատասխանած է Զախարովան:

Զախարովայի խօսքով տարածաշրջանային տարբեր հակամարտութիւններու կարգաւորման գործին մէջ Եւրոմիութեան մասնակցութեան փորձը միանշանակ չէ: «Դժուար թէ Պրիւքսէլը կարենայ պարձենալ յաջողութեամբ այս ոլորտին մէջ: Օրինակ՝ միջնորդական ջանքերը եւ ԵՄ առաքելութիւնը սերպակալ Գոսովի նահանգին մէջ: Սա պէտք է հաշուի առնել Հայաստանի մէջ նոր առաքելութեան վերաբերեալ ԵՄ որոշումը զնահատելու ժամանակ», նշած է ան:

Սփիւռքահայ Մասնագէտները Կը Հրակիրուին Աշխատելու ՀՀ Կառավարման Համակարգին Մէջ

ՀՀ Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակը կը մեկնարկէ «Ի Գործ» 2023 ծրագրի յայտագրի մուծումներու ընդունումը, որ սփիւռքահայ մասնագէտներուն հնարաւորութիւն կու տայ մէկ տարի ժամկէտով աշխատելու Հայաստանի պետական կառավարման 20-է աւելի մարմիններու մէջ:

Ծրագրին կրնան դիմել այն սփիւռքահայ մասնագէտները, որոնք ունին Պատկաւոր Արուեստից վկայականի աստիճան եւ առնուազն 5 տարուան աշխատանքային փորձ կամ Մագիստրոսական վկայականի աստիճան (կամ համարժէք կամ աւելի բարձր) եւ 3 տարուան մասնագիտական աշխատանքային փորձ:

2023 թուականի յայտագրի մուծումները կ'ընդունուին մինչեւ Ապրիլ 5՝ հայերէնով, անգլերէնով եւ ռուսերէնով: Հարցազրույցներու վերջնական փուլը յաջողութեամբ անցած մասնագէտները այս տարուան Սեպտեմբեր 1-էն աշխատանքի պիտի անցնին համապատասխան գերատեսչութիւններու մէջ:

Ընտրուած մասնակիցներուն կը տրամադրու ճամբորդական տոմս (դէպի Հայաստան եւ հակառակ ուղղութեամբ), կեցութիւն նպաստ՝ ամսական 336.000 դրամ ծրագրի ընթացքին, առողջու-



թեան ապահովագրութիւն եւ մէկ տարուան կացութեան կարգավիճակի տրամադրման վճարը:

Մասնագէտները կրնան լրացնել յայտագրի մուծում Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակի կայքին մէջ:

«Ի Գործ» ծրագիրը կ'իրականացուի 4-րդ անգամ ըլլալով: Այն Հայաստանի Հանրապետութեան պատմութեան մէջ իրականացուող առաջին ծրագիրն է, որու ծիրին մէջ սփիւռքահայ մասնագէտները պետական մակարդակով կը հրակիրուին աշխատանքի ՀՀ կառավարութեան եւ այլ գերատեսչութիւններու մէջ:

Ծրագրի ծիրին մէջ արդէն իսկ սփիւռքահայ 150 մասնագէտ աշխատանքի անցած է Հայաստանի եւ Արցախի գերատեսչութիւններուն մէջ: Ծրագրի աւարտէն յետոյ անոնց 60 տոկոսէն աւելին մշտական աշխատանքի անցած է Հայաստանի մէջ, այդ շարքին՝ զբաղեցնելով բարձրաստիճան պաշտօններ:

Հայաստանի ՀՆԱ-ն Աճած Է 12,6%-ով՝ Կազմելով 21 Միլիարդ Տոլար

Հայաստանի ՀՆԱ-ն 2022-ին կազմած է շուրջ 8,5 թրիլիոն դրամ, որ դրամի ներկայ փոխարժէքով համարժէք է 21 միլիարդ տոլարին եւ երբեք արձանագրուած ամենաբարձր ցուցանիշն է:

Վիճակագրական կոմիտէի հրապարակած տուեալներուն համաձայն՝ 2022-ին՝ 2021-ի համեմատ (7 թրիլիոն դրամ) Հայաստանի ՀՆԱ-ն աւելցած է 12,6%-ով՝ կազմելով 8,5 թրիլիոն դրամ: Վերջին երեսուն տարիներու ընթացքին Հայաստանի տնտեսութեան համար սա մրցանշային ցուցանիշ է:

2022-ին աւելի տպաւորիչ եղած է աճը ելեւմտական եւ ապահովագրական գործունէութեան ոլորտին մէջ՝ 46,9%: Տեղեկատուութիւն եւ կապի ոլորտին մէջ աճը եղած է 45,9%, «փոխադրումներ եւ պահեստային տնտեսութեան» մէջ՝ 45,2%, կացութեան եւ հանրային սնունդի կազմակերպման ասպարէզին մէջ՝ 23,6%, շինարարութեան մէջ՝ 18%, մեծածախ եւ մանրածախ առեւտուրին մէջ՝ 16,8%, եւ մշակող արդիւնաբերութեան մէջ՝ 11,9%:

Անկում արձանագրուած է գիւղատնտեսութեան եւ հանքարիւնաբերութեան ոլորտներուն մէջ՝ համապատասխանաբար -0,7% եւ -3,4%: Ամենամեծ անկումը



արձանագրուած է առողջապահութեան եւ բնակչութեան ընկերային սպասարկման ոլորտին մէջ՝ -6,3%:


2022-ին կտրուկ աւելցած է մէկ շունչին բաժին ինկոդ ՀՆԱ-ն: Այս ցուցանիշը, համաձայն Վիճակագրական կոմիտէի հրապարակման, հասած է 2,86 միլիոն դրամի կամ նախորդ տարուան միջինացուած փոխարժէքով 6.500 տոլարի: Ներկայիս փոխարժէքով այդ թիւը մօտ 7.300 տոլար է:

2021-ին մէկ շունչի հաշուով ՀՆԱ-ն 2,3 միլիոն դրամ եղած է, որ այն ժամանակ կը համարուէր երբեք արձանագրուած ամենաբարձր ցուցանիշը:

2022-ին տնտեսական աշխուժութեան աճը Հայաստանի մէջ կազմած է 14,2%:

ԼՈՒՐԵՐ

Նիկոլ Փաշինեան Եւ Պոպ Սեննետես Բննարկած Են Իրավիճակը Լեռնային Ղարաբաղի Շուրջ



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը Ծերակուտական Պոպ Սեննետեսի հետ

Միւսիսի Անվտանգութեան Համաժողովի ծիրին մէջ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան հանդիպում ունեցած է ԱՄՆ Ծերակուտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ Պոպ Մեննետեսի հետ:

Րաբաղի շուրջ իրավիճակը: Վարչապետը անդրադարձած է Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով ԼՂ-ի մէջ ստեղծուած ծանր մարդասիրական իրավիճակը: Կարեւորուած է այս ուղղութեամբ միջազգային հանրութեան հետեւողական ուղղութիւնն ու հասցէական արձագանգը:

ԵՆԻՍՎ Համազեկուցողները Արձանագրած Են Լաչինի Միջանցքին Փակ Ըլլալուն



ԵՆԻՍՎ-ի համազեկուցողները Բերձորի ճանապարհի անցակտի մօտ

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵՆԻՍՎ)՝ Հայաստանի պարտաւորութիւններու կատարման վերահսկողութեան համար պատասխանատու համազեկուցողներ Քիմմօ Քիլիւնենը (Ֆինլանտա) եւ Պորիանա Օպերկը (Շուէտ) փետրուար 18-ին այցելած են Հայաստանը Արցախին կապող Բերձորի ճանապարհի (Լաչինի միջանցք - Խմբ.) անցակէտ ու արձանագրած անոր փակ ըլլալը: Այս մասին Ֆէյսպուքի իր էջով տեղեկացուցած է Միւսիսի մարզպետարանը:

Վերադառնալով Բերձորի ճանապարհի փակ լինելու պատճառով Միւսիսը սպաստանած արցախցիներին: «Այստեղ ենք փաստահաւաք առաքելութեամբ՝ պարզելու, թէ իրականութեամբ ինչ է կատարուած Հայաստան-Արցախ սահմանին: Ուզում ենք լսել ձեզ, հասկանալ ձեր ապրումները, որպէսզի ներկայացնենք մեր զեկուցներում», նրանց ասաց Քիմմօ Քիլիւնենը:

ԱՄՆ Վարչակազմը Կը Շարունակէ Աշխատիլ Հարաւային Կովկասի Մէջ Խաղաղութեան Հաստատման Ուղղութեամբ

Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան հաստատման գործընթացը կը գտնուի ԱՄՆ պետական քարտուղարի ուղղութեան կեդրոնին: Այս մասին յայտնած է ԱՄՆ Պետական Քարտուղարութեան խօսնակի տեղակալ Վետանթ Փաթելը լրագրողներու հետ ճեպագրուած ընթացքին:



Պետական Քարտուղարութեան խօսնակի տեղակալ Վետանթ Փաթել

տարածաշրջան: Դիւանագէտը նշած է, որ անոր այցին համար խոչընդոտներ չկան, սակայն ճամբորդութիւններու ծրագիրներուն մասին առայժմ տեղեկութիւններ չկան:

Ամերիկացի Տիեզերագնացը Մերժած Է Մասնակցիլ Պաքուի Միջազգային Տիեզերագնացութեան Գոնկրէսին

Ամերիկացի յայտնի տիեզերագնաց Կարեթ Ռեյզման մերժած է մասնակցիլ Պաքուի մէջ կայանալիք Միջազգային Տիեզերագնացութեան Գոնկրէսին: Ան թուիթթըրով արձագանգած է Տիեզերագնացութեան Միջազգային Ֆետերասիոնի յայտարարութեան (IAF) Պաքուի Գոնկրէսին մասնակցելու վերաբերեալ:



Ամերիկացի տիեզերագնաց Կարեթ Ռեյզման

նը 1 տեղ առաջ Ռուսիայէն, կը շնորհաւորեմ Ատրպէյճանը): «Թրանսփարէնսի Ինթըրնէշնըլ»-ը Ատրպէյճանը կը դասակարգէ 128-րդ տեղը 180 երկիրներու մէջ՝ իրենց ներկայիս փոստութեան ընկալման ցուցակով, կրկին Ռուսիայէն ընդամենը մէկ տեղով բարձր», գրած է Ռեյզման:

Միւսիսի Եռակողմ Հանդիպման Ընթացքին

Շարունակուած էջ 1-էն
Ատրպէյճանի՝ Լաչինի միջանցքը ապօրինի շրջափակելու եւ անոր հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած մարդասիրական, բնապահպանական եւ ուժանիւթային ճգնաժամի փաստը:
«Մենք կը հաւատանք, որ 30 տարուան հակամարտութենէն յետոյ Հայաստանն ու Ատրպէյճանը ունին հնարաւորութիւն խաղաղութիւն ապահովելու, նշած է ԱՄՆ

պետական քարտուղար Պիլինքընը:
«Կողմերը կեդրոնացած են խաղաղութեան գործընթացին վրայ, այդ շարքին՝ ուղիղ երկխօսութեան միջոցով, ինչպէս նաեւ Եւրոմիութեան եւ մեր հետ: Միացեալ Նահանգները հաստատական է օժանդակելու այս ջանքերուն, թէ՛ մեր ընկերներուն, թէ՛ այսպիսի եռակողմի ձեւաչափերով, թէ՛ այլ միջազգային գործընկերներու հետ», նաեւ ըսած է պետական քարտուղարը:

Նիկոլ Փաշինեան Կրաստանի Կարչապետին, Ատրպէյճանի Նախագահին Եւ ԵԱՀԿ Գլխաւոր Քարտուղարին Յետ Մասնակցած Է Տարածաշրջանի Անվտանգութեան Կերպերող Քննարկման

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Միւնխիտի համաժողովի ծիրին մէջ մասնակցած է Հարաւային Կովկասի հարցերով քննարկման՝ «Շարժե՞լ սարերը. Անվտանգութեան կառուցումը Հարաւային Կովկասի մէջ» խորագրով: Քննարկման մասնակցած են նաեւ Վրաստանի վարչապետ Իրաքլի Զարիպաշվիլին, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը եւ ԵԱՀԿ գլխաւոր քարտուղար Հելկա Շմիթը:

Ստորեւ կը ներկայացուի վարչապետ Փաշինեանին քննարկումը վարողին կողմէ ուղղուած հարցումներն ու պատասխանը.

Հարց - Պրնգ վարչապետ, կը խնդրեմ մեկնաբանել ի՞նչ հետեւեալներ կ'ունենայ Ուքրաինայի դէմ Ռուսիոյ պատերազմը Ձեր երկրին վրայ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Կը ցանկանամ շնորհակալութիւն յայտնել Ձեզ այս ձեւաչափի կազմակերպման համար: Համաձայն եմ, գուցէ սա պատմական հանդիպում է, բայց կարեւոր է հասկանալ այն պատմութեան բնաբանը, որն այս պահին կերտուած է, որովհետեւ մենք կարող ենք տարբեր արդիւնքներ կամ հետեւանքներ ունենալ, եւ ես կարծում եմ, մենք պէտք է հետապնդենք արդիւնք: Սա մեր մօտեցումն է:

Ինչ վերաբերում է Ձեր հարցին, համաշխարհային անկայունութիւնը չի կարող դրական ազդեցութիւն ունենալ մեր տարածաշրջանային իրավիճակի վրայ, որովհետեւ գիտէք, որ արդէն տեւական ժամանակ է ամբողջ միջազգային ուղղութիւնը հասկանալիօրէն սեւեռուած է Ուքրաինայի վրայ, եւ դա մեր տարածաշրջանի համար նոր վտանգներ է ստեղծում: Շատ կարեւոր է, որ մեր տարածաշրջանը նոյնպէս արժանանայ միջազգային ուղղութեան, որովհետեւ կարծում եմ, որ շատ վտանգներ կան:

Ո՞րն է մեր մօտեցումը: Մենք հաւատարիմ ենք մնում մեր ժողովրդավարական բարեփոխումների օրակարգին, որովհետեւ հաւատում ենք, որ ժողովրդավարական բարեփոխումները, ժողովրդավարական հաստատութիւնների գարգացումը, օրէնքի գերակայութիւնը, մարդու իրաւունքները, անկախ դատական համակարգը կը բարելաւեն իրավիճակը մեր տարածաշրջանի շուրջ: Կարծում ենք, որ սա հասկէտ է ողջ տարածաշրջանի համար, իսկ մեզ համար շատ կարեւոր է՝ աշխատանքի մեր մասնակցութեամբ:

Հարց - Պարոն Փաշինեան, Դուք հիմա նաեւ Թուրքիոյ կ'օգնէք այս սարսափելի երկրաշարժին հետ կապուած: Ի՞նչ կը կարծէք, կա՞ն արդեօք յարաբերութիւններու բարելաւման հեռանկարներ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ: Հարցաւոր է, որ այս սարսափելի աղետը առիթ հանդիսանայ ձեր յարաբերութիւններուն մէջ փոփոխութեան համար:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Գիտէք, Թուրքիա մարդասիրական օգնութիւն ու փրկարարներ ուղարկելու որոշման հիմքում մենք ունենինք միայն մարդասիրական շարժառիթներ, քանի որ մեր հարեւանութեամբ միլիոնաւոր մարդիկ էին տառապում, բայց այս ընթացքում մենք թուրքական կառավարութիւնից բաւականին դրա-



կան հակազդեցութեան ակնատես եղանակ, եւ եթէ այս քայլն ունենայ նաեւ քաղաքական հետեւանքներ, դա կը լինի էլ աւելի լաւ: Բայց մեր սկզբնական շարժառիթը զուտ մարդասիրական էր, եւ ինչպէս մենք յայտարարել էինք, պատրաստ ենք ցուցաբերել այնքան մարդասիրական օգնութիւն, որքան մեր հնարաւորութիւնները ներում են, եւ մենք պատրաստ ենք դա անել:

Ինչ վերաբերում է քաղաքական երկխօսութեանը, անկեղծ ասած, մինչեւ երկրաշարժը մենք արդէն հաստատել էինք քաղաքական երկխօսութիւն յատուկ ներկայացուցիչների միջոցով, եւ ես կարծում եմ, այդ երկխօսութիւնը շատ կարեւոր է: Ես նկատի ունեմ համապատասխան թնօրոտ ստեղծելու առումով, որտեղ այս որոշումները կայացուցին: Եւ մենք կարծում ենք, որ այս մարդասիրական երկխօսութեան բնաբանում քաղաքական որոշումներ կայացնելու հնարաւորութիւններն էլ աւելի բարձր կը լինեն: Մենք պատրաստ ենք առաջ շարժուել եւ կարծում ենք, որ դիւանագիտական կապերի հաստատումը Թուրքիայի հետ եւ մեր սահմանի բացումը շատ դրական ազդեցութիւն կ'ունենան ոչ միայն մեր տարածաշրջանային իրավիճակի հետ կապուած, այլ նաեւ միջազգային իրավիճակի առումով:

Հարց - Այժմ կ'ուզեմ վերադառնալ հարցին, որուն մասին նախագահ Ալիեւը ակնարկեց սկիզբը: Խօսքը պատերազմի մասին է, որ սկսաւ երկու տարի առաջ, եւ հիմա ալ մենք կը տեսնենք իրավիճակ մը, որ տակաւին կը շարունակէ մնալ ճգնաժամային: Մենք այստեղ բացակայութիւններ չենք վարեր, բայց միջազգային հանրութիւնը մտահոգուած է մարդասիրական իրավիճակով, եւ մենք, բոլորը ինչպէս կը հետեւին Թուրքիոյ մէջ մարդասիրական իրավիճակին, այդպէս ալ կը հետեւին այնտեղ առկայ խնդիրին: Դուրսէն մենք կը տեսնենք Լաչինի միջանցքը շրջափակուած է: Պարոն վարչապետ, կը փափաքէի խօսելիք վստահութեան ամրապնդման ջանքերուն մասին: Մենք, ի հարկէ, կը փափաքէինք տեսնել լարուածութեան անկում փոքր քայլերու միջոցով, որ պիտի մօտեցնէ այս հակամարտութեան լուծման:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Դուք իրաւացի էք: Արդէն 70 օր է, որ Լաչինի միջանցքն արգելափակուած է: Դժբախտաբար, հիմա Լեռնային Ղարաբաղում առկայ է մարդասիրական ճգնաժամ, ինչպէս նաեւ ուժանիւթային ճգնաժամ, որովհետեւ ելելտրականութեան մատակարարումը դէպի Լեռնային Ղարաբաղ կասեցուած է, կազմի մատակարարումը նոյնպէս կասեցուած է, եւ մենք հաշուել ենք, որ վերջին 70 օրուայ ընթացքում կազմի մատակարարումը կասեցուել է առնուազն 10 անգամ, եւ սա խնդիր է, որն արժանի է ուշադրութեան: Մեր դիրքորոշումը հետեւեալն է. 2020-ի Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութիւնում մենք ունենք շատ յստակ կէտեր Լաչինի միջանցքի հետ կապուած, եւ համաձայն այդ յայտարարութեան, Ատրպէյճանի եւ Ռուս խաղաղապահների պարտականութիւնն է Լաչինի միջանցքը բաց պահել, բայց հիմա, դժբախտաբար, մենք ունենք բացարձակապէս այլ իրավիճակ: Մենք կարծում ենք, որ միջազգային ուղղութիւնը պէտք է սեւեռուած լինի այս իրավիճակի վրայ, որովհետեւ մտավախութիւն ունենք, որ այս իրավիճակի շարունակականութիւնը կարող է պատճառել անդառնալի մարդասիրական հետեւանքներ Լեռնային Ղարաբաղի հայերի համար:

Հարց - Ինչպէս ըսի, այստեղ բացակայութիւններ չենք վարեր, բայց կը փափաքէի վարչապետ Փաշինեանին հնարաւորութիւն տալ արձագանգելու նախագահ Ալիեւին:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին՝ նախագահը նշեց եռակողմ յայտարարութեան մասին, եւ այդ յայտարարութիւնում առկայ է Լեռնային Ղարաբաղը, եւ այս փաստաթղթի տակ առկայ է Ատրպէյճանի նախագահի ստորագրութիւնը:

Եւ մենք ունենք Լաչինի միջանցքը, որը պէտք է ազատօրէն գործէր: Ի դէպ, համաձայն այդ եռակողմ յայտարարութեան, Լաչինի միջանցքը պէտք է լինէր Ատրպէյճանի վերահսկողութիւնից դուրս, եւ սա համաձայն Ատրպէյճանի նախագահի ստորագրութեան: Վերջերս Լեռնային Ղարաբաղից մի խումբ հայ երեխաներ փորձում էին ուղեւորուել Լաչինի միջանցքով եւ նրանց կանգնեցրեցին. որոշ դիմակաւորուած ստրպէյճանցիներ ներխուժեցին փոխադրական քիցներս, որտեղ երեխաները ճշում էին: Սա Լեռնային Ղարաբաղի հայերի վերջին փորձն էր ազատօրէն տեղաշարժուել Լաչինի միջանցքով:

Նախագահ Ալիեւը նշեց քանդուած մզկիթների մասին: Կը ցանկանայի նշել, որ 2017-ին Ատրպէյճանում մի քանի մզկիթներ քանդուել են նոր ճանապարհներ կառուցելու համար: Ի միջի այլոց,

Խորհրդային տարիներին Ատրպէյճանում 1560 մզկիթներ են քանդուել, եւ դա սովորական բան էր Խորհրդային Միութեան համար: Հայաստանում նոյնպէս քանդուել են եկեղեցիներ եւ մզկիթներ: Գիտէք, Լեռնային Ղարաբաղի հայերը չպէտք է վճարեն Խորհրդային տարիների պարտքը: Դա շատ վտանգաւոր խօսույթ է, որովհետեւ ես մտավախութիւն ունեմ, այնպիսի սպաւորութիւն է, որ Ատրպէյճանն այս ամբողջ իրավիճակին փորձում է հաղորդել կրօնական բնաբան: Դա շատ վտանգաւոր է: Ձկայ որեւէ կրօնական բնաբան այս հակամարտութիւնում:

Եւ ի միջի այլոց, մեր երկրում մենք ունենք մասնատական փոքրամասնութիւն, եւ ունենք գործող մզկիթ, սա է իրականութիւնը: Գիտէ՞ք ինչն է Ատրպէյճանի խօսույթում մտավախութիւն յառաջացնում. նրա հետտրաբանութիւնը սպաւորութիւն է ստեղծում, եւ գուցէ այդպէս էլ կայ, որ Ատրպէյճանը որդեգրել է վրէժխնդրութեան քաղաքականութիւն: Հնարաւոր է՝ դա է Ատրպէյճանի քաղաքականութիւնը: Բայց ինչպէս նշուեց, մենք շատ բարդ պատմութիւն ունենք, եւ ես հէնց նոր սասցի, որ այժ, գուցէ սա պատմական հանդիպում է, բայց ի՞նչ նպատակով ենք մենք ցանկանում դա օգտագործել: Անհանդուրժողականութիւն, ատելութիւն բորբոքելու, յարձակողական հետտրաբանութիւն մեր տարածաշրջանում, թէ՞ հակառակը՝ օգտագործել այս հարթակը՝ իրավիճակը բարելաւելու համար:

Մենք կարծում ենք, որ այս հարթակը պէտք է օգտագործել կառուցողական մտադրութիւններով: Ի հարկէ, մենք հիմա կարող ենք թշնամութեան մասին շատ պատմութիւններ պատմել, բայց ո՞րն է ղեկավարների դերը՝ խորացնել այդ թշնամանքը, թէ՞ օգտագործել մեր հնարաւորութիւնները, մեր մանտաթները: Ես հպարտ եմ որ ես, մեր կառավարութիւնը, նոյնիսկ աղէտալի պատերազմից յետոյ կարողացաւ մեր երկրում անցկացնել ազատ, ժողովրդավարական ընտրութիւններ, որն ամբողջ աշխարհի կողմից ճանաչուեց որպէս ազատ եւ ժողովրդավարական, թափանցիկ եւ մրցունակ: Եւ ինչպէս սասցի, մեր տեսանկիւնից, լուծումը ժողովրդավարութիւնն է, լուծումը թափանցիկութիւնն է, լուծումը երկխօսութիւնն է, լուծումը յարգանքն է բոլոր երկրների հանդէպ: Եւ մենք պատրաստ ենք աշխատել այդ ուղղութեամբ: Շնորհակալութիւն:

Հարց - Պարոն վարչապետ, Դուք քանի մը անգամ նշած էք, որ ՀԱՊԿ-ը այնքան ալ արդիւնատու չէ այս պահին, եւ հարց կը բարձրացուի, որ Հայաստանը կրնայ լքել զայն: Կը խնդրէի մեկնաբանել:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Գիտէք, մենք որոշակի մտահոգութիւններ ունենք ՀԱՊԿ-ի հետ կապուած, եւ այդ մտահոգութիւնները հանրային են եղել: Մենք այդ հարցերը բարձրացրել ենք մեր գործընկերների մօտ, փաստացիօրէն հանրայնացրել ենք, եւ մտահոգութիւնները դեռ առկայ են: Աշխատում ենք այդ հարցերին, մտահոգութիւններին լուծումներ գտնելու ուղղութեամբ:

Մենք Պիտի Շարունակենք Ըլլալ Հայաստանի Կողքին

Շարունակուած էջ 1-էն

մէջ ստեղծուած իրավիճակին: «Քանի մը օրէն Ուքրանիոյ նկատմամբ ուսական ապօրինի յարձակման տարելիցն է, եւ չնայած, որ մենք չենք կրնար վերջնական եզրայանգումներ ընել, բայց կրնանք այս տարին ամփոփել ու կիսուել որոշակի հեռանկարներով: Բնականաբար, իմ ելուցքի առանցքին պիտի ըլլայ Ուքրանիոյ նկատմամբ Ռուսիոյ սանձազերծած պատերազմը, բայց պէտք է նշեմ, որ մենք չենք մոռնար Կովկասի, Մերձաւոր Արեւելքի, Ափրիկէի մէջ ընթացող պատերազմները, ահաբեկչութեան դէմ պայքարը, միջուկային անվտանգութեանն առնչուող եւ այլ հարցեր:

Մեր խնդիրն է այսօր բացատրել, բացայայտ դարձնել, որ Ռուսիան անկայունութիւն եւ քաոս տարածող ուժ է, ինչ որ ան կ'ընէ ոչ միայն Ուքրանիոյ, այլ նաեւ Կովկասի, Մերձաւոր Արեւելքի, Ափրիկէի մէջ՝ վերջինիս պարագային «Վականեր»ի խումբին կողմէ միջամտութեամբ: Ինչպէ՞ս մենք կրնանք հաւատալ, որ Կովկասի մարտահրաւէրները կրնան յաղթահարուել այն նէոգաղութատիրական Ռուսիոյ կողմէ, որ ես քիչ առաջ նկարագրեցի: Ես այդ կ'ըսեմ իմ ընկերոջ՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի ներկայութեամբ, որուն կողքին պիտի շարունակենք ըլլալ եւ պիտի շարունակենք գործել», յայտնած է Մաքրոն:

Խուճը Մը Երիտասարդներ Մուտք Գործեցին ՍԴՀԿ-ի Շարքերը

Շարունակուած էջ 1-էն

Երիտասարդներու մուտքը 135-ամեայ Հնչակեան կուսակցութեան շարքերէն ներս, որ իր գործունէութեամբ միշտ եղած է հեռատես, յանձնառու եւ խիզախ թէ անցեալին եւ թէ ներկայիս: Տպաւորիչ էր երիտասարդներու երդման արարողութիւնը, կնքահայրութեամբ ՍԴՀԿ-ի «Արսէն Կիտուր» մասնաճիւղի ղեկավարներէն՝ ընկ. Աւետիս Մազմանեանի: Արդարեւ նորամուտ ընկերները ունենցին հաւատարիմ մնալ Հնչակեան գաղափարաբանութեան եւ անշեղ ու աննահանջ կերպով ծառայել անոր ազգային, քաղաքական ու հասարակական առաջարդանքներու իրագործման:

Միջոցառման աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ ՍԴՀԿ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ ընկ. Վարդան Քէօրոյլեան, նորագիր անդամներուն փոխացնելով իր սրտագին շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները, որմէ ետք յոսնկալս երգուեցաւ կուսակցութեան քայլերգը: Յայտագրի վերջաւորութեան տեղի ունեցաւ ընկերային ժամ: Խանդավառ մթնոլորտի մէջ նորագիր ընկերները ընդունեցին ներկաներուն ջերմ շնորհաւորութիւններն ու բերկրալի բարեմաղթութիւնները:

Հայաստանի Արտաքին Գործերու Նախարար

Շարունակուած էջ 1-էն

տաքին գործերու նախարար Մելլութ Չաւուչօղլուն ըսած է, որ պայմանաւորուածութիւններ ձեռք բերած է իր հայ գործընկեր Արարատ Միրզոյեանի հետ՝ արագացնելու ենթակառուցութեան քննարկատրաստման գործընթացը երկու երկիրներու միջեւ ցամաքային հաղորդակցութեան բացման համար: «Երկու կողմերն ալ ունին սահմանային անցակէտերու մօտ ճանապարհներու եւ կամուրջներու վերլուծութիւններու եւ ստուգումներ կը տարուին, կան քայլեր, որոնք մենք պիտի ձեռնարկենք սահմանային անցակէտեր տանող ճանապարհներուն հետ կապուած: Այսօր մենք պայմանաւորուած ենք արագացնելու այդ միջոցառումներուն ընդունումը», ըսած է Չաւուչօղլուն Անգարայի մէջ Միրզոյեանի հետ կապուած մամուլի ասուլիսին ընթացքին: Ան յիշեցուցած է, որ այդ երթուղին կը համարուի պատմական «Մետաքսի ճանապարհ», եւ «անոր վերականգնումը կարեւոր նշանակութիւն պիտի ունենայ»: Միաժամանակ Միրզոյեան ըսած է, որ Երեւանը պատրաստ է Անգարայի հետ յարաբերութիւններու լիովին կարգաւորման եւ երկու երկիրներուն միջեւ խաղաղութեան վերականգնման: Ան հաղորդած է, որ երկիրները մտադիր են համատեղ վերանորոգել Անիի կամուրջը, որ կը գտնուի երկու երկիրներու սահմանին: «Մեր այսօրուայ հանդիպումը, ի հարկէ, պայմանաւորուած է

բազում կեանքեր խլած աղէտով, սակայն, այս դժուարին պահին գտնուելով թուրքիայում, եւս մէկ անգամ ցանկանում եմ վերահաստատել տարածաշրջանում խաղաղութիւն կառուցելու եւ, մասնաւորապէս, թուրքիայի հետ յարաբերութիւնների ամբողջական կարգաւորման՝ դիւանագիտական չարաբերութիւնների հաստատման ու Հայաստանի եւ թուրքիայի միջեւ սահմանի ամբողջական բացման հարցում Հայաստանի Հանրապետութեան պատրաստակամութիւնը եւ ձգտումը: Ուզում եմ տեղեկացնել, ինչպէս նախարար Չաւուչօղլուն քիչ առաջ նշեց, որ այսօր մենք քննարկել ենք այս գործընթացին վերաբերող որոշ մանրամասնութիւններ, ունենք համաձայնութիւն համատեղ ջանքերով վերանորոգել Անիի կամուրջը, ինչպէս նաեւ հոգ տանել համապատասխան ենթակառուցութեան քննարկմանին՝ սահմանի ամբողջական բացմանն ընդառաջ», եզրափակած է ՀՀ արտաքին գործերու նախարարը: Իր կարգին, Ֆրանսան ողջունած է Արարատ Միրզոյեանի այցելութիւնը թուրքիա՝ երկրաշարժէն տուժած բնակչութեան Հայաստանի տրամադրած աջակցութեան ծիրին մէջ: Մինչ այդ՝ Հայաստանը հայթրեքական ցամաքային սահմանով՝ Մարգարայի կամուրջով, մարդասիրական օգնութեան երկրորդ խմբաքանակը ուղարկած է թուրքիա, թուրքերով գրած է Հայաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան խօսնակ Վահան Յունանեանը:

Ալիւն Ընդամենը Օգտուել Եւ Օգտուում Է

Շարունակուած էջ 2-էն

յաստանում ներքաղաքական ընտրութեան դաշտն է գործնականում «կապիտուլիացիոն», ինչպէս դարձել տարիներ շարունակ, այդպէս էլ շարունակում լինել այդպիսին: Այսինքն, չկայ իրապէս արդիական, գաղափարական, արժէքային եւ հայեցակարգային, որակապէս այլ մակարդակի ընտրութիւն, որի շնորհիւ Հայաստանը, իսկ դրա արդիւնքում նաեւ Արցախը, կը կարողանան քայլ առ քայլ յաղթահարել ծանր պարտութեան հետեւանքն ու գնալ առաջ ոչ միայն վիճակագրորեն, այլ նաեւ որակապէս: Այստեղ է բուն խնդիրը եւ այստեղ է, որ Հայաստանի ժողովրդին «կապիտուլիացիա» են ենթարկում իր երեսնամեայ նորագոյն պատմութեան «անիւր» պտտող թէ իշխած, թէ իշխող, թէ տարբեր տարիների ընդդիմադիր քաղաքական ուժերի գերակշռող մեծամասնութիւնը: Սա է ներկայիս գերագոյն մարտահրաւէրը, որ պէտք է յաղթահարի Հայաստանի ժողովուրդը:

URGENT APPEAL FOR ALEPPO

Once again, our communities are hit hard following the recent devastating earthquake that hit Turkey and Syria. Our fellow Armenians lost loved ones. Residential structures, community centers, businesses and, above all, educational institutions suffered significant damages.

Our brothers and sisters in Aleppo & the Guiligian School need your urgent help...

The Armenian Educational Benevolent Union - AEBU, with all its chapters, is appealing to all of you to give and to give generously to help rebuild this very important beacon of education for Armenians in Aleppo for many decades and secure a safe learning environment for our children.

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

In collaboration with GUILIGIAN BENEVOLENT FOUNDATION - USA

Please donate now at: **AEBU.ORG/ALEPPO**

You may also send your donations by check to: AEBU 1060 N. Allen Avenue Pasadena CA 91104

www.massispost.com
daily news updates

Pashinyan-Aliyev-Blinken Talks Held in Munich



MUNICH -- The leaders of Armenia and Azerbaijan met in Munich on Saturday for talks organized by U.S. Secretary of State Antony Blinken.

“We believe that Armenia and Azerbaijan have a genuinely historic opportunity to secure enduring peace after more than 30 years of conflict,” Blinken said at the start of his trilateral meeting with Armenian Prime Minister Nikol Pashinyan and Azerbaijani President Ilham Aliyev.

“The parties themselves have renewed their focus on the peace process, including through direct conversation as well as with the EU and ourselves,” he said. “The United States is committed to doing anything we can to support these efforts, whether it’s directly with our friends, whether it’s in a trilateral format such as this or

with other international partners.”

“I’m very grateful for the presence of both the president and the prime minister today, and look forward to a good conversation. Thank you,” the US State Department quoted Blinken as saying.

“The trilateral meeting between Armenian Prime Minister Nikol Pashinyan, United States Secretary of State Antony Blinken and Azerbaijani President Ilham Aliyev took place within the framework of the Munich Security Conference. The course of the works around a peace treaty draft between Armenia and Azerbaijan was discussed at the meeting, as well as the unblocking of regional transport infrastructures and delimitation between

Continued on page 3

We Will Continue to Stand by Armenia and My Friend Nikol Pashinyan. Emmanuel Macron

MUNICH — In his speech at the Munich Security Conference, French President Emmanuel Macron announced that he will continue to stand by Armenia and Prime Minister Nikol Pashinyan.

The main part of Macron’s speech was related to the Russian-Ukrainian conflict, but the leader of France also referred to the situation in the South Caucasus.

ներում, սեւահայ, եռանդուն թիֆլիսցի շատ համեստ ընտանիքից էլած ու թիֆլիսի գիմնազիայում կրթուած ուսանող Օր. Մարիամ Վարդանեանի հետ: Օրիորդը 2-3 տարով մեծ էր Նազարբէկից: Համարձակ, վառվռուն ուսանող-ուսանողուհիները մէջ ուս յեղափոխութիւնից անկերջ խօսող ու վիճող Օր. Վարդանեանը - ապագայ Մարոն - քիչ թէ շատ հայերէն կտորատում է, բայց հոգ չէ, իրար հասկանալ կարելի է եւ ուսերէն խօսելով: «Կարճ ի կարճոյ», փոխադարձ համակրանքը փոխուած է փոխադարձ յարգանքի, յարգանքը՝ սիրոյ: Օր. Վարդանեանը մկրտում է ուսանող Նազարբէկին ուս յեղափոխական «Նարողովոյց» կուսակցութեան աւագանում, իսկ Նազարբէկը ծանօթացնում է Օր. Վարդանեանին հայ պատմութեան, հայ գրականութեան, թրքահայ ժողովրդի քաղաքական վիճակին [...]: Երբ ուսանող Նազարբէկեանը հաղորդում է թիֆլիս մօրը, որ իր սրտի ընտրածը Օր. Մ. Վարդանեանն է, մօրը աչքերը 'մութն է կոխում' ու բաց է բաց մերժելով իր մայրական համաձայնութիւնը՝ իմաց է տալիս իր եղբոր՝ Ա. Մելիք-Ազարեանցին [...]: 'Տեսնուած բա՞ն է, որ ազնւաւորն ընտանիքից - ու

թուականի օգոստոսին կը ձեւաւորեն «յեղափոխական ընկերութիւն մը», ապա 1887 թուականի առաջին քառորդին կը վաւերացնեն իրենց ծրագիր-կանոնագիրը՝ դնելով հիմը հետագայ Հնչակեան կուսակցութեան:

Ժամանակի հոլովոյթին մէջ, երբ գոյութիւն ունէին պայքար, սրբազան իտէալներու հասնելու ձգտում, Աւետիս եւ Մարո Նազարբէկեան ամուսիններուն մէջ մեծ էր փոխադարձ սէրը եւ միեւնոյն գործի իրականացման համար անձնագոհութեան պատրաստակամութիւնը: Բայց երբ արտաքին հարուածները կը շատնան եւ իտէալները, որոնց իրենք հոգեւին նուիրուած էին, հետզհետէ մին միւսին ետեւէն կը փշուրին, այնուհետեւ իրենց մէջ գերիշխող կը դառնան ոչ թէ այն յատկանիշերը, որոնք միասնական էին, այլ առանձնազարդները, որոնք զգալի եւ ցայտուն կը դարձնեն երբեմնի սիրահարներուն միջեւ գոյութիւն ունեցող անհաշտելի տարբերութիւնները: Բաց աստի, ոչ միայն ազգային-ազատագրական պայքարի յաջողութեան, այլ նաեւ Աւետիս եւ Մարո Նազարբէկեաններու ընտանեկան կեանքին վրայ ողբերգական անդրադարձ կ'ունենայ 1896 թուականին Լոնտոնի մէջ Հնչակեան կուսակցութեան պառակտումը: Այս առթիւ Ռուբէն Բերբերեան, որ այնքան մօտէն ճանչցած է Աւետիս եւ Մարո Նազարբէկեանները եւ երկար տարիներ աշխատակցած է անոնց հետ, իր յուշերուն մէջ տիրաշուք կը նշէ.

«Ամուսինների փոխադարձ սէրը խիստ մեծ էր [...] շատերը կարծում էին, որ այդ ամուսինները փոխադարձ զգացմունքները գտած են իրենց հոգեկան բարձունքները: Թերեւս այդպէս էլ էր, երբ դեռ շարունակում էր 'սուրբ գործը', որին նրանք հաւատում էին եւ որի դառնութեան բաժակը նրանք վճռած էին խմել մինչեւ վերջը: Բայց երբ 1896-97 թևականների կուսակցական ներքին պառակտումներից յետոյ գործից հեռացան, քոլարկուած վիճը նրանց մէջ բացւեց եւ կին ու մարդ բաժանւեցին իրարից, որպէս ռիսերիմ թշնամիներ» (21):

Արդարեւ, ոչ միայն Լոնտոնի մէջ Հնչակեան կուսակցութեան պառակտումը լիովին քայքայած էր Աւետիս Նազարբէկեանի առողջութիւնը, այլեւ տեղուց իրաւապահատեաններուն մօտ «Հնչակ» թերթի պատճառներով մնալու իրաւունքը պահպանելու համար «Նոր հնչակեան» ներուն դէմ հիւժիւ պայքարը, ստոյգ, զայն հասցուցած էր ընկճախտ ունենալու սեմին: Թէպէտ Նազարբէկեան կը յաջողի Լոնտոնի դատական վճիռով պաշտպանել «Հնչակ»ի սեփականութեան իր իրաւունքը, սակայն այդ չի բուժեր իր մէջ յառաջացած ծանր հիասթափութիւնը: Այս մասին Ռուբէն Խան-Ազատ իր յուշերուն մէջ կը նշէ.

«Ա. Նազարբէկը երկար պայքարի ու կռիւների պատճառով ջղախիւ հիւանդութիւն էր ստացել եւ բժիշկների խորհուրդով ստիպուած էր թողնել Լոնդոնը եւ տեղափոխուել Շուէցարիա, կնոջ ու երեխաների հետ միասին» (22):

Ահաւաստիկ այս ժամանակահատուածին մէջ է, որ Աւետիս Նազարբէկեանի մայրը, Ալեքսանդր Մելիք-Ազարեանցի աւագ դուստրը՝ Արփենին, եւ կրտսերը՝ Սոֆի-

տասարդութեան տարիներուն:

«Արփենին, որպէս մարդ եւ որպէս կին,- կը վկայէ Ռուբէն Խան-Ազատ,- Մարոյից շատ մեծ առաւելութիւններ ունէր (աւելի գեղեցիկ, աւելի բարի, վերին աստիճանի անկեղծ ու ազնիւ էր), բայց տիպար հայ բուրժուայի աղջիկ էր: Իր կրթութիւնը նա ստացել էր տանը, ֆրանսուհի եւ անգլուհի դաստիարակչուհիներից. հիանալի կերպով տիրապետում էր այդ երկու լեզուներին էլ, ինչպէս եւ ուսերէնին: Գիտէր բաւականին լաւ եւ հայերէն, որ սովորել էր մանկութեան հասակում իր մօրից՝ Ծերենցի աղջկանից, որը այնպէս գրականագէտ էր, եւ յայտնի մեր գրականութեան մէջ Մենիկ ծածկանունով եւ որը շատ վաղ էր վախճանուել:

Երեւի հէնց իր մօրից ժառանգած լինելով սէր դէպի գրականութիւն, Արփենին լաւ ծանօթ էր ֆրանսական եւ բոլոր եւրոպական թէ՛ հին եւ թէ՛ նոր գրականութիւններին: Նա շատ սիրում էր եւ երաժշտութիւն ու ինքն էլ նուագում էր դաշնամուրի վրայ մեծ զգացմունքով» (23):

(Շարունակելի)

1. Գասպարեան Ա., «Մելիք-Ազարեանցի եկամտաբեր տունը. Թիֆլիսի այցեքարտը Ռուսթափելու փողոցում», «Անկախ նորութիւն», 25.05.2017, տե՛ս http://archive3.ankakh.com/article/?id=70170%2F%E2%80%8Bmyeliq-azaryantsi-yekamtabyer-tune--thiflisi-aytsyeqarte-rrusthavyelupvoghvotsum&fbclid=IwAR3esBdv91KE_zIC7m-H17UGEAwf2KqQYRrGz-tW9MD0lqCW2ThOT6HK9CU
2. Մանուկեան Ա., «Հնչակեան կուսակցութեան կազմաւորումը եւ Քսան Կախաղաններու մասին անդրադարձը եւրոպական մամուլի ու դիւանագիտական թղթակցութեան մէջ», Երեւան-Պէյրոս, 2020:
3. Անդ, էջ 22:
4. Նշումը տե՛ս «Մելիք-Ազարեանցի եկամտաբեր տունը» յօդուածին մէջ:
5. Տե՛ս «Թագուհի Շիշմանյան (Օրիորդ Մենիկ), Երկեր», աշխ. Ալ. Ա. Մակարյանի, Երեւան, 2015, էջ 12:
6. Ծերենցի եւ Թագուհի Շիշմանյանի մասին տե՛ս Ալոյեան Ն., «Զօն Ծերենցի խնկելի յիշատակին (Ծննդեան 200-ամեակի առթիւ)», «Սիւն», թիւ 8-12, օգոստոս-դեկտեմբեր 2022, էջ 428-436:
7. Տե՛ս նոյնը:
8. Տե՛ս «Արեւելեան մամուլ», հանդէս, 1876, թիւ 9. Եւ Զ. Նաւեւ «Թագուհի Շիշմանյան (Օրիորդ Մենիկ), Երկեր», էջ 8:
9. Նոյնը:
10. Հայկական Արփենիկ իգական անունն է, որ ռուսերու մօտ ընդհանրացած է Արփեն տարբերակով: Աւելի ուշ յիշատակութիւններուն մէջ պիտի տեսնենք, որ Արփենի նաեւ Արփեն կը կոչուի:
11. Տե՛ս «Թագուհի Շիշմանյան (Օրիորդ Մենիկ), Երկեր», աշխ. Ալ. Ա. Մակարյանի, անդ, էջ 22:
12. 1934 թուականին Լաւրենտի Բերիայի հրամանով ամբողջապէս կ'ոչնչացուի Խոջիվանքի հայկական գերեզմանատունը: Բոլշեւիկներ կը կործանեն նաեւ հայոց Ս. Աստուածածին եկեղեցին՝ շրջակայքը գտնուող եկեղեցական բոլոր շինութիւններն ու դամբարաններուն մեծ մասը, իսկ մարմարեայ բիրաւոր շիրմաքարերը եւ անգուգական խաչքարերը իբրեւ շինանիւթ կրկին կ'օգտագործուին պետական այլ կառոյցներու համար: Այսպէս, կ'անհետանայ հայ գրագիտութիւնի Թագուհի Շիշմանյանի օրդ. Մենիկին գերեզմանը, իսկ Ծերենցի գերեզմանէն կը մնայ ընդամենը խորհրդանշակաւորեւ վերջը գետեղուած յուշաքար մը . Հայ մշակոյթի գործիչներու պանթեոնին մէջ: Այս մասին տե՛ս համացայցային հետեւեալ աղբիւրը. https://hy.wikipedia.org/wiki/խոջիվանքի_գերեզմանատուն
13. Ալեքսանդր Մելիք Ալզարեանց: Հմմտ. Արփիարեան Տ., «Մասիս» հանդէս ազգային, գրական եւ քաղաքական, 41-րդ տարի, թիւ 3958, 14 փետրուար 1892, էջ 47-49:
14. Թագուհի Շիշմանյան՝ օրդ. Մենիկ, զինք կը յիշէ իր Թիֆլիս փետրուար 1879-ին գրուած նամակներէն մէկուն մէջ: Տե՛ս «Թագուհի Շիշմանյան (Օրիորդ Մենիկ), Երկեր», աշխ. Ալ. Ա. Մակարյանի, անդ, էջ 181:
15. Աւետիք Եգեկեան ծնած է Ալեքսանդրապոլ 1849 թուականին եւ մահացած Թիֆլիսի մէջ 1916 թուականին: Հայ լեզուի եւ գրականութեան այս մշակին մասին տե՛ս Դաւիթ Անանուհի ստորագրած մահախօսակարն «Գործ» գրական, գիտական, հասարակական եւ քաղաքական ամսագրին մէջ, Պաքու, 1917, էջ 146-148:
16. Տե՛ս Բերբերեան Ռ., «Պատրանքների շրջանից», «Վեմ», ԻԳ., յունիս-սեպտեմբեր, Փարիզ, 1938, էջ 37:
17. Տե՛ս նոյնը:
18. Տե՛ս Բերբերեան Ռ., «Պատրանքների շրջանից», «Վեմ», Զ. տարի, թիւ 5, յունուար-մարտ, Փարիզ, 1939, էջ 39:
19. Տե՛ս Բերբերեան Ռ., «Պատրանքների շրջանից», «Վեմ», ԻԳ., յունիս-սեպտեմբեր, Փարիզ, 1938, էջ 37-38:
20. Հմմտ. նոյնը:
21. Հմմտ. անդ, էջ 40:
22. Հմմտ. Խան-Ազատ Ռ., «Հայ յեղափոխականի յուշերից», «Հայրենիք», թիւ 12, հոկտեմբեր 1928, էջ 151:
23. Հմմտ. Խան-Ազատ Ռ., «Հայ յեղափոխականի յուշերից», «Հայրենիք», թիւ 6, ապրիլ 1929, էջ 108:



Աւետիս Նազարբէկեան, գրական անունով՝ Լեոնեց 1864–1939

այնքան փառաւոր ապագայ խոստացող երիտասարդը - ամուսնանայ ինչ որ մի աղքատ նիհիլիստ ուսանողուհու հետ, տարիքով է՛լ աւելի մեծ, քան թէ ինքը: Իսկ եթէ այդ քայլը անէ, Աւետիսը թող գիտնայ, որ այսուհետեւ չի ստանալու մօրից եւ ոչ մի սանթիմ» (19):

Սիրոյ հարցին մէջ արտաքին արգելքներ ու սպառնալիքներ, ընդհակառակը, առաւել եւս իրարու կը գողեն սիրահար գոյգը, յատկապէս երբ գաղափարական համոզումներ եւ իտէալներու ձգտելու պահանջը կը դառնայ իր կեանքը իմաստաւորելու հիմքը: «Ուսանող Նազարբէկը Մարոն մէջ ամրացրել էր հայ ազատագրական զգացումները, իսկ Մարոն իր ապագայ ամուսնու սրտում նոր աշխարհ էր բացել՝ ընկերակարական գաղափարը իր յեղափոխական գործելակերպով» (20):

Աւետիս եւ Մարո 1886 թուականի ամառը արդէն ժընեւ կը գտնուին, որ կը գտնեն յեղափոխական գաղափարներով տոգորուած հայ համախոհ ուսանողներու հոյլ մը, որուն հետ նախ նոյն

Զօրակցինք Բոլորիս Զալեպին



ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

2023-ի Փետրուար 6-ն ալ պատմութեան անցաւ եւ համայն աշխարհի համար դարձաւ աւերակներով, արցունքներով, ցաւով եւ վիշտով խառնուած նոր թուական մը: Եթէ կ'ուզէք, կրկին Սպիտակի երկրաշարժը չիշեցնող, սակայն այս անգամ՝ 21-րդ դարու սարսափազդու թուական մը: Արդեօ՞ք տակաւին մարդ մնաց այս աշխարհի վրայ, որ տեղեակ չըլլայ կամ չտեսնէ այս ասաւոր երկրաշարժին պատճառած նիւթական եւ մանաւանդ մարդկային կորուստները:

Նոյն այս տխրահռչակ օրը, երբ աշխարհէն կտրուած, պարտեզիս ծառերով զբաղած էի, յանկարծ հարեանս ցանկապատի միւս կողմէն, վէրք ստացող վալրի կենդանիի նման, ասաւոր ձայնով ճչաց.

- Հարեան, քո՛ Հալապը կործանուեց-

Անակնկալի եկայ: Այս մէկը ձայն չէր, այլ՝ բացազանչութիւն, որ գիտ շուարումի տարաւ: Զուգեցի հարցումներ ընել: Զէ՞որ «իմ Հալապն» էր եւ ոչ՞ իրը: Իր «գիտցածը» այդքան էր: Ուստի վալրիկեանին տուն վագեցի՝ մտածելով, որ նման գոյժ մը «սփռելով»՝ մարդուկը հաստատապէս «բաներ» մը ըսել ուզած էր: Անմիջապէս, առանց ժամանակ կորսնցնելու, պատկերասփիւռի հայկական եւ տեղական կայանները իրար խառնելով, եղելութիւնը ստուգել փորձեցի ու միւս կողմէ ալ «Այ ֆոն»-իս եւ Ֆէյսպուքի կայքէջէ փնտռեցի: Խառնաշփոթ իրավիճակ: Տակնուվրայութիւն ու մտահոգ քրտինք: Վերջապարտութեան ամէն բան յստակ էր: Պատահած էր ասուելի ու մահացու երկրաշարժ: Արդէն կը դիտէի սարսափելի նկարները: Ահաւոր տեսարաններ: Ուրեմն հարեանիս բերնէն փրթած բացազանչութիւնը իրական էր:

Ու ամէն առիթով միշտ կրկնած ու աւելցուցած եմ, որ Սուրբիան կարեւոր ողնասիւններէն մէկն է պիւրութիւնը: Սուրբիահայրութիւնը, եւ մանաւանդ՝ անոր հալեպահայրութիւնը, սփիւռեան մեր իրականութեան մէջ, իր եկեղեցական, քաղաքական, մշակութային, կրթական եւ մարզական փորձառութեամբ, որոշ ու նախանձելի աշխուժութեամբ հաստատուն գաղութ մը կը ներկայացնէ:

Սուրբիա եւ Հալեպ, ինչ կ'ուզէք՝ ըսէ՛ք, շատերուս մօտ տակաւին անոր հողին ջերմութիւնը մնացած է կարօտով:

Կիս շուտով միացաւ ինծի՝ դէմքին վրայ գաղտնի վախի մը հետ խառնուած փութկոտութեամբ: Անկասկած մեր երկուքին յուշերը հազար թէրերով մեզ կը քաշէին: Անոր համար միաժամանակ անոնց ջեր-

մութիւնն ու յուզումը կ'ապրէինք:

Ու ամբողջ երեկոն եւ տակաւին գիշերուան ուշ ժամերուն, այր եւ կին մեր դէմքերուն վրայ վախ ու զարմանք բռնած, ժամերով գամուած մնացինք աշխարհի ամէն կողմերէն տեւաբար ցուցադրուած Հալեպի եւ Թուրքիոյ՝ հայկական Կիլիկիոյ աւերակներուն նկարներուն դիմաց: Շշմած եւ անխօս: Դիտեցինք: Սարսափեցանք: Ինքնածին՝ յուզուեցանք: Ողբերգական եւ վշտալի: Ու տագնապեցանք:

Տակաւին հոն՝ այդ քաղաքին մէջ, երկուքս ալ հին ու նոր յուշեր եւ հարազատներ ունէինք, անոր համար էր, որ մեր ձայներն ալ ինքնածին՝ ծանր բռնած էին:

Հալեպ... Կասկածէ դուրս է, թէ ան պիւրութեան մեր ամէնէն եռանդուն եւ օրինակելի գաղութներէն մէկն է, ուր այս օրերուն բոլորին երազները վարնուելով՝ նշուած դժբախտութեան ալիքներուն՝ կը սպառնային խորտակել հայու մեր յոյսերը: Շատերուս համար սուրիական հողը նկատուած է իբրեւ երկրորդ հայրենիք: Հող մը, որ հայութեան փրկութեան լատեղած է տակաւին ասկէ հարիւր տարիներ առաջ: Ու երկրի իրավիճակէն մեկնած՝ կրնանք նաեւ չիշեցնել, որ հոն աւելի քան տասնամեակ մը առաջ՝ հայոց ներկայ պատմութեան անիւր սկսած էր ծուռ դառնալ եւ հիմա, այս օրերուն, ասաւոր աղէտ մը հասած էր իր դրան շեմին: Բոլորս ալ կը զգանք ու կ'ապրինք այս անիծեալ պատահարին ծանրութիւնը:

Աղէտի յաջորդող ժամերուն իսկ ի յայտ եկաւ, ինչպէս միշտ, նաեւ այս անգամ ալ, թէ հոն տեսիլք ունեցող հաւաքականութիւն ունինք: Ղեկավարութիւն՝ հոգեւոր եւ քաղաքական, որ ունի լուծում ապահովող զարկերակ՝ հաւատքի եւ հաւաքական ապրումով ու նոր արշալոյսեր առաջնորդող որդեգրումներով:

Ուրեմն մեր առաջնահերթ պարտականութիւնն էր մեր արագ եւ դրական կերպով մասնակցութիւնը ներկայ կենսական եւ անմիջական իր կարիքներուն: Զենք կրնար անտարբեր ու պարզ ականատեսներ ըլլալ եւ մնալ: Ժամանակն է, որ հոն մեր հայրենակիցներու ապրելու եւ գոյատեւելու միջոցը ամէն միջոցներով բազմացնել: Զենք ուզեր, որ գաղութը կորսնցնէ իր հեւքը:

Այս օրերուն հոետորական խօսքերու ժամանակը չէ: Բոլորիս հայ մարդու գիտակցութիւնն է հականը, որպէսզի հայ մարդու երազը շարունակուի, որպէսզի հոն հայ հաւատքի թափը չկտորի: Վերջապէս, վերանորոգուի եւ վերականգնի գաղութը, որպէսզի գաղութի կենսունակութիւնը չցամաքի: Ուստի մեզի

կ'իյնայ զօրակցիլ եւ աջակցիլ: Կը կրկնեմ՝ այս է ասաւոր օրերու հրամայականն ու ակնկալուածը եւ մեր բոլորին պատասխանատու կեցուածքը:

Պայման է թօթափել մեր մտքերու մէջէն անտարբերութեան փոշին, որպէսզի գաղութը իր կենսական դերը շարունակէ աւելի վճռականութեամբ եւ խանդավառութեամբ:

Հալեպ... Հէյ, հարեան, եթէ չես «իմանում», ըսեմ, որ Հալեպը միայն ի՛մ եւ «քո՛ Հալեպը» չէ՛, այլ մեր բոլորին Հալեպն է, դարբնէ ի վեր: Ուստի պարտաւոր ենք գիտակցիլ այս իրականութեան: Ներքին չէ միայն բառերով եւ զգացականութեամբ շարժիլ ու մօտէն հետեւիլ յայտարարուած անմեղ եւ սակայն գիտակից կոչերուն: Ստեղծուած տագնապին սրտբաց մօտենալ: Նուիրաբերել: Փոյթով անմիջական կարիքներուն հասնիլ:

Բարեբախտաբար աշխարհի տարածքին ունինք անհատներ, հաստատութիւններ, նուիրեալներ, բարեսիրական եւ մարդասիրական միութիւններ ու կազմակերպութիւններ, եւ հայ ժողովուրդը ու հայրենիք, որոնցմով կ'ապրի նաեւ գաղութը:

Յիշեցնեմ նաեւ, որ տարիներէ ի վեր դժուար, դժնդակ, դառն ու ծանր պայմաններու տակ կը գտնուի Սուրբիոյ բնակչութիւնը եւ մանաւանդ հոն ապրող հայութիւնը: Արդ, կը հաւատանք, որ մեր բոլորին գերագոյն պարտականութիւնն է, որ սուրիահայերուն համար միասնաբար, համադրուած աշխատանքով եւ արագութեամբ կատարենք մեր խղճի ու մանաւանդ ազգային պարտականութիւնը՝ մասնակից դառնալով այս առթիւ ծրագրուելիք ու կազմակերպուելիք նիւթական հանգանակութիւններուն ու նախաձեռնութիւններուն:

Հեռուներէն միայն յոյս ներշնչելը իմաստազուրկ է: Անհեթեթ:

Ո՞վ տեղեակ չէ, թէ սուրիահայութիւնը պատմութիւն ունեցող եւ

մանաւանդ համբուրելի արժէքներու տէր գաղութ մըն է, եւ որ սակայն այս օրերուն ճակատագրի բերումով իրեն համար լոյսի ու օդի չափի եւ աւելի անհրաժեշտ է նիւթական օժանդակութիւնը: Ուրեմն նիւթապէս գոհաբերենք: Յուսահատիլը արդէն ողբ է:

Պէտք չէ մնալ պարզ հանդիսատեսի դիրքին վրայ: Այս բոլորին լոյսի տակ հրամայական է, որ այս տառապեալ գաղութը միշտ մեր լայն ուշադրութեան առարկան դարձնենք: Անտարբերութիւնը ո՞հի՞ր է: Այնտեղ մեր անձնական եւ հաւաքական գոհաբերութեան անսահման եւ անսակարկ կարիքը կայ:

Ուստի պէտք է փոյթով անոր սրտին հասնիլ, որպէսզի ան բաբախելէ չզղորդի:


Մէկ խօսքով՝ տէր կանգնիլ անոր: Օգնութեան ձեռք երկարել: Կը կրկնեմ՝ նիւթապէս օժանդակել: Արարք մը, որ մեծապէս գնահատելի եւ ողջունելի պիտի ըլլայ պատմականօրէն:

Շատերու համար այս տողերը կրկնութիւն պիտի թուին ըլլալ: Բայց նաեւ կը միտին ընթերցողին փոխանցել սէրն ու գուրգուրանքը՝ մայր գաղութի ժողովուրդին:

Այս մէկը ազգային գիտակցութեան հետ ատաղձուած է:

Մեր անմիջական օգնութեան կը կարօտի սփիւռքի մեր մայր գաղութը: Լուրջ, հրատապ եւ տագնապալի վիճակ: Վիճակը տխուր է: Իսկ առանց բացառութեան՝ հոն ապրող մեր հայորդիներուն շուտափոյթ նիւթական օգնութիւն հասցնելու էականութիւնը համայն հայութեան համար նկատուած է մարդկային եւ ազգային մեծ պարտականութիւն: Ժամանակն է, որ դարձեալ եւ փոյթով կեանքի կոչել տարիներ առաջ իրենց համար մեր մօտ ծնունդ տուած Սուրիահայութեան օգնութեան ֆոնտի օժանդակ մարմինը:


Ահա լաւագոյն միջոցը՝ զօրակցելու այս օրերուն տխուր եւ աւերակ մեր եւ բոլորիս Հալեպին...



St. Gregory Armenian Apostolic Church Men's Forum
(Ladies & Families Always Welcome)

Thursday, March 2, 2023 – 6:30 P.M.

Guest Speaker: Pasadena Mayor – The Honorable Victor Gordo



TOPICS OF DISCUSSION FOLLOWED BY Q & A

- * Pasadena's Achievements – Challenges – New Developments
- * Discussing the Issues of: Homelessness, Crime, Traffic etc, and Solutions....
- * Housing – Measure H and other challenging city functions moving forward
- * Pasadena's relationship and interactions with the large and strong Armenian Community of Pasadena and all its organizations

Pasadena's Condemnation of Azerbaijan

Pasadena officially declared its support for Armenian American residents in its denouncement of Azerbaijan's military aggression in Artsakh.

Mayor Gordo's Declaration:

"The City Of Pasadena stands in solidarity with the people of Artsakh and although we're separated by distance we condemn the humanitarian catastrophe and pledge our ongoing support locally"

At St. Gregory the Illuminator Church "Geragos Hall" 2215 E. Colorado Blvd., Pasadena

RSVP'S Are A Must As Dinner Will Be Served Church Donation \$30

Hilda Gourdikian: 626-695-9899, Ardash Gourdikian: 626-399-1914, Church Off: 626-449-1523

Sponsor A Dinner in Memory of a Loved One, a Birthday, an Anniversary, in Recognition of a Friend or Family Member, a Graduation & for any Other Event. Please Contact Hilda Gourdikian above.

Վարդանանց Տօնակատարութիւնը Պաթոն Ռուժի մէջ



1572 երակարածիք տարիներ շարունակ հայ ժողովուրդը ոգեկոչած է Վարդանանց հերոսամարտի, հայոց անմահանուն սպարապետ Վարդան Մամիկոնեանի, իր քաջամարտիկ զինակիցներուն եւ վկայեալ հոգեւորականներուն անթառամ յիշատակը: Դարերու հոլովոյթին մէջ ժամանակը չէ կրցած բնաւ զայն ենթարկել մոռացութեան քայքայիչ իր օրէնքին, չէ յաջողած հայութեան հաւաքական գիտակցութեան մէջ աղօթել շողարձակ փայլքը անոր, ընդհակառակը՝ տարուէտարի առաւել եւս շատցած է այս տօնին հմայքը, որովհետեւ ան սոսկ անցեալի էջերուն մէջ աւարտուն եւ անկենդան պատմութիւն մը չէ, այլ ներկային մէջ միշտ իր խօսուն պատգամով վերանորոգ իրականութիւն մըն է քրիստոնէական հաւատքի ինքնութեան պահպանութեան, ուխտի միաբանութեան հանդէպ հաւատարմութեան, հայրենիքի եւ ազգային արժէքներու պաշտպանութեան համար:

Հայրենիքէն հազարաւոր մղոններով հեռու վայրերու մէջ հայկական հին ու նոր գաղթօճախներ երբ կը հիմնեն եկեղեցի ու դպրոց, ազգայինեկեղեցական տօներու ծիրին մէջ պարտականութեան ամենանուիրական զգացումով կը նշեն Վարդանանց հերոսամարտին յիշատակը «Սրբոց Վարդանանց զօրավարաց մերոց, հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին» անունով:

Ահաւասիկ, այսպիսի կրօնաբոյր զգացումներով եւ ազգային վառ գիտակցութեամբ Լուիզիանայի հայութիւնը այս տարի առաջին անգամ ըլլալով Պաթոն Ռուժի Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ ոգեկոչեց Վարդանանց տօնը: Արդարեւ, Կիրակի, 12 Փետրուար 2023 թուականին, արդէն առաւօտեան ժամերուն, տեղւոյն համայնքի անդամները եւ յարակից հայաբնակ շրջաններէն՝ Նիւ Օրլինս, Լա Փլաս, ՄոպիլԱլապամա եւ այլ քաղաքներէն, ժամանած էին Պաթոն Ռուժ՝ մասնակցելու համար սուրբ պատարագի արարողութեան եւ Վարդանանց յիշատակին ձօնուած տօնակատարութեան: Օրուան պատարագիչն էր Տ. Միքայէլ քհնյ. Տէյվէճեանը: Արարողութիւնը հոգեպարար եւ վեհացնող էր անտարակոյս: Նկատելի էր, որ հայաշունչ համայնքի անդամները յաճախ ձեռնամած կը հետեւէին սրբազան արարողութեան, իսկ շարականներու երգեցողութեան հոգեթով ազդեցութիւնը ջերմեռանդ տպաւորութիւն մը կու տար անոնց դէմքե-

րուն:

Օրուան պատգամներն էր Զուրիցերիայէն հիւրաբար ժամանած դոկտ. Աբէլ քհնյ. Մանուկեանը, որ նախորդող օրը եկեղեցոյ երգչախումբի անդամներուն սորվեցուցած էր Ս. Ներսէս Շնորհալուոյ Վարդանանց յիշատակին ձօնած «Նորահրաշ պսակաւոր» շարականին երգեցողութիւնը: Արդարեւ, յաւարտ սուրբ պատարագի եկեղեցոյ դպրաց դասը գեղեցկօրէն երգեց Վարդանանց շարականը: Հոսակ խօսք առաւ օրուան բանախօսը՝ սկսելով իր ելոյթը Վարդանանց հերոսամարտի պատմութիւնը ոգեղինած Եղիշէ վարդապետի դիւցազներգութենէն՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է» բնաբանով: Ան քանի մը հանգրուաններով ներկայացուց Վարդանանց պատմութիւնը՝ նշելով բախտորոշ երեք իրադարձութիւններ, որոնք տեղի ունեցան հայ ժողովուրդի կեանքին մէջ՝ Դ. եւ Ե. դարերուն: Առաջինը 301 թուականին Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումն էր, որ միանգամայն նոր ուղղութիւն եւ զարգացում մը տուաւ հայութեան ազգային, քաղաքական եւ մշակութային կեանքին: Եկրորդը 406 թուականին Ս. Մեսրոպ Մաշտոցի հայոց գիրերու գիւտն էր, որուն շնորհիւ օտարալեզու եւ իր եկեղեցական արարողութիւններով ժողովուրդին անհաղորդ քրիստոնէութիւնը միանգամայն հայացաւ եւ այնուհետեւ Աւետարանի լոյսով շողախեց ամբողջ հայ մշակոյթը: Երրորդը 451 թուականի Վարդանանց պատերազմն էր, որ հայոց պատմութեան մէջ հանդիսացաւ անկիւնադարձային նշանակութիւն ունեցող դարակազմիկ եղելութիւն մը: Այսպէս, հայ ժողովուրդը արեան մկրտութեամբ իր կեանքին մէջ ընդմիշտ ամրագրեց քրիստոնէութիւնը, անոր տալով համօրէն ազգային նկարագիր մը՝ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց» կարգախօսով:

Ներկաները մեծ ուշադրութեամբ ու հաճոյքով կը հետեւէին Վարդանանց պատերազմի փուլերուն, որոնք կուռ եւ ժողովուրդին մատչելի լեզուով կը նկարագրէր բանախօսը՝ յաջորդաբար ներկայացնելով Միհրնբերտ հազարապետին անունով Յազկերտ Բ.ի հրովարտակը ուղղուած հայոց մեծամեծներուն՝ հրաժարելու քրիստոնէութենէն եւ փոխարէնը ընդունելու զրադաշտական կրօնը: 449 թուականին Արտաշատի

Սուրբ Սարգիս Եկեղեցի, Լոնտոն Զարիւր Ամեակի Տօնակատարութիւններ եւ Միջոցառումներ

2023 տարին կը յիշատակուի հարիւր ամեակը Սուրբ Սարգիս եկեղեցիի հիմնադրութեանը, Անգլիոյ Լոնտոն մայրաքաղաքին մէջ: Այս իմաստով եկեղեցիի ժողովը յարմար նշումներով սկսաւ կազմակերպել այս աննախնդաց յիշատակումը:

Առաջին ձեռնարկը տեղի ունեցաւ Փետրուար 4, 2023, գեղեցիկ համերգով մը կատարողութեամբ մեծ համբաւ վաստկած, «Զիլինկիրեան Քառեակը»: Քառեակը գեղեցիկ յայտագիրով մը հանդէս եկաւ եւ ներկայացուց հայ եւ օտար երաժիշտներու նշանաւոր գործերէն:

Համերգին բացումը կատարեց Սուրբ Սարգիս եկեղեցոյ ժողովի ատենապետ՝ Պրն. Գրիսթֆըր Քիւրքճեանը ուր ան ըսաւ, «Հարիւր տարիներ առաջ, մեծ հայասէր եւ մարդասէր բարերար Պրն. Գալուստ Կիւլպէնկեան տեսիլքը ունեցաւ հիմը դնել այս եկեղեցիին եւ որ մինչեւ այսօր կը կենայ իր առաքելութեան բարձր պատուանդանին վրայ»:

Միացեալ Թագաւորութիւններու եւ Իրանտալի հայոց Թեմի Առաջնորդ, Գերշ. Տ. Յովակիմ Եպս. Մանուկեան, իր գոհունակութիւնը յայտնեց որ երեկոն կը պատուեն Անգլիոյ Պալատի բարձրաստիճան անձնաւորութիւններէն՝ Լորտ Գենեթը եւ Տիկ. Օլիսան, նաեւ Գրիսթֆըր Սրբազանը՝ Սառլոնք եկեղեցիէն եւ տակաւին շատ մը քոյր եկեղեցիներէ եւ յարանուանութենէ ներկայացուցիչներ: Յովակիմ Սրբազան նաեւ անդրադարձաւ Սուրբ Սարգիս եկե-

Վարուժան Ներսէսեանը: Անոնք շեշտը դրին Հայ-Բրիտանական փոխ յարաբերութեան անհրաժեշտութեանը՝ յիշելով տարիներու վրայ երկարած դրուագներ: Համերգը աւարտեցաւ հիւրասիրութեամբ, Սուրբ Սարգիս եկեղեցիի Կիւլպէնկեան սրահին մէջ:

Երկրորդ հանդիսութիւնը տեղի ունեցաւ Փետրուար 5ին՝ եկեղեցական պատարագով եւ արարողութեամբ: Եկեղեցական պատարագը հովուապետեց եւ արարողութիւնը կատարեց Յովակիմ Սրբազանը: Եկեղեցական արարողութեան ներկայ էին նաեւ Անկլիքան եւ քոյր համայնքներէ ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ, ինչպէս Գենգրիքթոն նահանգի կառավարիչ Չեյսիլէ եւ Գալուստ Կիւլպէնկեանի եւ այլ բարերաներու ընտանեկան հարազատներ եւ անդամներ: Արարողութեան աւարտին, Սառլոնք նահանգի Սրբազանը ըսաւ, «Մեզմէ անոնք որ երէկ ներկայ կրցան ըլլալ Զիլինկիրեան քառեակի գեղեցիկ համերգին՝ երբ յայտագիրը սկսաւ Մոցարթի յօրինումէն ներկայացնելով երաժշտական կտորներ եւ շարունակուեցաւ հայկական երգահաներու ստեղծագործութիւններով, պիտի կարենան կամըջել իրենց ապրած զգացումները այսօրուայ եկեղեցական պատարագի հետ ուր մենք բոլորս Աստուածոյ տարինք մեր մտորումները, երախտագիտութիւնը, ցաւերը եւ աղօթքերը այս հոգեպարար արարողութեան մէջէն: Պատարագի աւարտին տեղի ունեցաւ յատուկ աղօթք-հոգե-



ղեցի ընծայած առաքելութիւնը՝ մէկ կողմէ պահպանելու համար հայկական ինքնութիւնը եւ նաեւ Քրիստոնէական հաւատք եւ արժէքներ: Ան նաեւ երախտագիտական զգացումներով խօսեցաւ հիմնադիր անդամներուն տեսիլքին վրայով՝ ուր եկեղեցին այսօր տակաւին կը շարունակէ իր առաքելութիւնը: «Սուրբ Սարգիս եկեղեցին եղաւ մեր հաւաքականութիւնը ի մի բերող հարթակ մը Լոնտոնի մէջ: Այս եկեղեցիին մէջ է որ ձեզմէ շատեր մկրտուեցաք: Եթէ մեր նախորդ սերունդը հիմնեց այս եկեղեցին, մեզի կը մնայ շարունակելու եւ ալ աւելիով զօրացնելու այս հաւատքի ամրոցը» ըսաւ Յովակիմ Սրբազանը:

Համերգի վերջաւորութեան իրենց խօսքերը նաեւ ներկայացուցին Լորտ Գենեթը եւ Մեծն Բրիտանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան, Ն.Վ. Պրն.

հանգիստ ննջեցաւ բոլոր հիմնադիր անդամներուն եւ նուիրատուներուն համար: Պատարագէն ետք տեղի ունեցաւ հաղորդակցական պահ եւ սիրոյ սեղան:

Այս երկու հարիւր ամեակի հանդիսութիւնները մեծ խնդրաւառութիւն ստեղծեցին զաղուծի անդամներուն եւ բոլոր հրաւիրեալներու մօտ: Հարիւր ամեակի յանձնախումբ կը ծրագրէ կազմակերպել այլ հանդիսութիւններ այս տարուայ ընթացքին:

Յիշենք որ Սուրբ Սարգիս եկեղեցին հիմնուած է 1922-1923 տարիներուն՝ Գալուստ Կիւլպէնկեանի կողմէ եւ իր ծնողացը յիշատակին: Եկեղեցիի ճարտարապետն է Արթիւր Տէյվիսը: Ան միակ եկեղեցին է Անգլիոյ մէջ որ շինուած է հայկական եկեղեցական ճարտարապետական հիմքով՝ ներշնչուած 13րդ դարու Հաղբատ վանքէն:

100 Ամեակի Յանձնախումբ

ՄԱՅԱԶԴ



ԹՇԽՈՒՆ ՇԱՄԼԵԱՆ-ՇՆՈՐՀԱՒՈՐԵԱՆ

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ Թշխուն Շամլեան-Շնորհաւորեանի մահը որ պատահեցաւ Փետրուար 7, 2023ին կէսօրէ ետք ժամը 4-ին յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան եկեղեցական կարգը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի Փետրուար 28, 2023ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, 2215 E. Colorado blvd, Pasadena CA 91107, ժամը 11:00ին որմէ ետք գերեզմանի կարգը պիտի կատարուի Hollywood Hills-ի Forest Lawn գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Դուստրը՝ Արշօ Շնորհաւորեան Տէրամարեան եւ զաւակները Սեւակ եւ Լարա: Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Karen Շնորհաւորեան եւ զաւակները Թորոս եւ Թաթիանա Թոռնիկը՝ Տէր եւ Տիկ. Սարօ եւ Լարա Շնորհաւորեան եւ զաւակները Մարքօ, Շանթ եւ Վաչէ Թոռնիկը՝ Տէր եւ Տիկ. Մայք եւ Անի ձինկէօգեան եւ զաւակները Քլոփ եւ Գօգօ Եղբօր զաւակները՝ Տէր եւ Տիկ. ձորձ եւ Աստղիկ Շիթիլեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Արթուր եւ Նարինէ Համալեան եւ զաւակները Տէր եւ Տիկ. Մարտիկ եւ Էօթենի Արոյեան Տիար Սահակ Շամլեան եւ համայն Շամլեան, Շնորհաւորեան, Պահատուրեան, Նահապետեան եւ Մազլումեան ընտանիքներ:

Վարդանանց Տօնակատարութիւնը

Շարունակուած էջ 12-էն

մէջ կը գումարուի ազգայինեկեղեցական ժողով մը, ուր հայ եկեղեցական ներկայացուցիչներն ու սպարապետ Վարդան Մամիկոնեանի կողմնակիցները Յագկերտ Բ.ին կը յղեն պատասխան նամակ մը, որուն մէջ վճռորոշ կը յայտարարեն, թէ հայեր քաղաքականօրէն պարսկական կողմնորոշումէ անջատուելու ծրագիր չունին եւ պիտի շարունակեն հաւատարիմ մնալ անոր, սակայն կրօնափոխութեան պահանջը ամենեւին կապ չունի քաղաքականութեան հետ, այլ, թէկուզ ենթակայ պարսկական իշխանութեան, այսուամենայնիւ իրենք ազատ պէտք է մնան իրենց կրօնական համոզումներուն եւ հաւատալիքներուն մէջ: Սոչնդ այնքան կայացած իրողութիւն մըն է հայոց մօտ, որ անոնք իրենց հաւատքի մասին խորիտ վկայութիւն մը տալով կ'ընդդիմանան Յագկերտ Բ.ի՝ յայտարարելով. «Այս հաւատքէն ո'չ ոք կրնայ մեզ խախտել, ո'չ հրեշտակները եւ ո'չ մարդիկ, ո'չ սուրը, ո'չ հուրը եւ ո'չ ալ ջուրը, ահաւասիկ, մենք պատրաստ ենք, քեզմէ՝ տանջանք, մեզմէ՝ համբերութիւն, քու սուրդ եւ մեր պարանոցները»:

Այս ընդդիմախօսութիւնը ինքնին պատերազմական կեցուածք մը կը նախադրէ: Յաջորդական դէպքերու զարգացումը՝ Տիգրանի մէջ հայ նախարարներու առերես կրօնափոխութիւնը, Հայաստան վերադառնալէ ետք անոնց ըմբօստացումը եւ ռազմական գործողութիւններու նախապատրաստութիւնը հոն կ'առաջնորդեն, որ Վարդան Մամիկոնեան իր 66 հազար աշխարհագորային ուժերով կը գտնուի Մուշկան Նիւսալավուրտ գորավարի հրամանատարութեան տակ գտնուող պարսկական 100.000ոց կանոնաւոր զօրքաբանակի մը դէմ յանդիման: Վայրը Վասպուրական աշխարհի Արտագ զաւառն է, Տղմուտ գետի ափին՝ Աւարայրի դաշտը: Յուզիչ է ռազմաճակատի նախորդող գիշերը Շաւարշանայ դաշտին մէջ հայոց զօրաբանակին միաբանութեան ուխտի նկարագրութիւնը հացի եւ գինուոյ փրկարար խորհուրդին շուրջ եւ իր քաջ նիզակակիցներուն ուղղած Վարդան Մամիկոնեանի սրտառուչ ճառը, որ ինքնին քրիստոնէական հաւատքի վկայութեան փայլուն էջ մըն է: Վարդան կ'իջնայ եւ իրեն հետ նաեւ իր քաջ նիզակակիցներէն հազար երեսուն եւ վեց վկաներ: Ճակատամարտը կ'աւարտի հայոց պարտութեամբ, բայց ոչ պատերազմը, այլ ան կը շարունակուի հրոսակային հայրուկային կռիւներով մինչեւ Վահան Մամիկոնեանի ձեռք բերած յաղթանակը: Արդարեւ, Վահանեանք կը յաջողին 484 թուականին Նուասակի պայմանագրով ստիպելու պարսկական արքունիքը ընդունելու հայ ժողովուրդի ներքին կեանքի ինքնուրոյնութիւնը՝ հրաժարելով միաժամանակ զայն կրօնափոխ ընելու ապարդիւն ծրագրէն:

Պատմութեան փոթորիկները չեն կրցած խորտակել հայ ժողովուրդի դիմադրողականութեան ոգին, ոչ իսկ ճակատագրի դաժան հարուածները յաջողած են ընկճել անոր ազատաբաղձ ձգտումները: Պետականութեան երազն անոր պայծառ մնացած է դարերու գալարումներուն մէջ: Վարդանանց ոգին մեզի կը պատգամէ, եզրակացուց դուրս. Աբէլ քննչ. Մանուկեան, հաւատարիմ մնալ մեր հայրերու միաբանութեան ուխտին եւ անկոտորում պահել մեր ազգային դիմադրողականութեան ոգին: Թէկուզ ամենադժնդակ մարտահրաւէրներուն դէմ պէտք է ազգովին բռունցքաւորուինք, յաղթութեան դաբնիներով պսակել կարենալու համար մեր հայկազուն ցեղի եւ Վարդանաց ուխտի ժառանգորդներուս արդար գոյապայքարը:

Վարդանանց տօնահանդէսը հուսկ շարունակուեցաւ Ս. Կարապետ եկեղեցոյ յարակից սրահին մէջ, ուր սիրոյ սեղանի շուրջ երգուեցան «Ազնիւ ընկեր», «Լոեց ամպերը», «Հիմի էլ լուենք» եւ այլ Վարդանանց երգեր: Եկեղեցւոյ ծխական խորհուրդի ատենապետ տիար Վազգէն Քալթազճեան սրտանց շնորհաւորեց Վարդանանց տօնին առթիւ իրենց անուանակոչութիւնը նշող բոլոր ազգայինները: Ան յայտարարեց, թէ այնքան ներշնչող ու ազդեցիկ էր համայնքին մէջ առաջին անգամ կազմակերպուած Վարդանանց տօնակատարութիւնը, որ այսուհետեւ ցանկալի պիտի ըլլայ զայն ամէն տարի նշել՝ հաւատքին հուրը երիտասարդ սերունդի սրտին, նաեւ հայութեան արդար իրաւունքներու իրականացման հասնելու ձգտումը Լուիզիանայի հայ համայնքի հաւաքական գիտակցութեան մէջ վառ պահելու համար:

Համայնքի անդամները եւ հենու տեղերէ ժամանած հիւրերը մինչեւ ուշ կէսօրէ վերջ տակաւին կը յամենային եկեղեցոյ յարակից սրահին մէջ ու կը վայելին հայաբոյր միջավայրը: Անոնք լիացած եւ, ստոյգ, պահ մը աւելի ոգեշնչուած հայցեցի ապրումներով վերադարձան իրենց վայրերը: Ներկայ մը

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) * \$50,00 * \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ----- Address: ----- City: ----- State:----- Zip Code:----- Country: ----- Tel:----- Email:-----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680


Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more... Please reach out for quotes Website: norayr.daduryan.com Email: norayrdaduryan@gmail.com

Մխիթարեանի Կոլը Նպաստժ Է «Ինթեր»-ի 3ադթանակին

Իտալիայի ֆուտպոլի առաջնութեան 23-րդ հանգրուանին «Ինթեր»-ը մրցած է «Ուդինեզէ»-ի հետ:

Միլանի մէջ կատարուած խաղին «Ինթեր»-ը առաւելութեան հասաւ 3:1 հաշուով: «Կապոյտներու» յաղթանակին նպաստած է նաեւ Հենրիխ Մխիթարեանի կոլը: Հայ կիսապաշտպանը դիպուկ հարուածով աչքի ինկած է 73-րդ վայրկեանին: «Ինթեր»-ի կազմէն կոլերը խփած են նաեւ Ռոմեոլո Լուկակուն եւ Լաուտարո Մարտինսը:



Այս յաղթանակէն յետոյ «Ինթեր»-ը Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին մէջ կը մնայ երկրորդ տեղը եւ ունի 47 կէտ: Առաջատար «Նապոլի»-ն հաւաքած է 62 կէտ:

Նափոլին 3ադթեց Սասուոլոյին

Իտալիայի Ա Սերիայի 23-րդ հանգրուանին «Նափոլին» 2:0 հաշուով յաղթեց «Սասուոլոյին»:

Նեափոլեան ակումբի կազմէն 12-րդ վայրկեանին կոլի հեղինակ դարձաւ Խվիչա Կվարացիելիան: 33-րդ վայրկեանին աչքի ինկաւ խումբի լաւագոյն ռմբարկու Վիկտոր Օսիմհենը:

«Սասուոլոյն» 24 կէտով 15-րդ տեղն է:

Պարսելոնան Սեփական Զարկի Տակ 3ադթեց Կադիսին

Լա լիգայի 22-րդ հանգրուանին «Պարսելոնան» սեփական յարկի տակ 2:0 հաշուով յաղթեց «Կադիսին»: Կատալոնական ակումբի կազմէն առաջին կէսի վերջնամասին աչքի ինկան Սերժի Ռոբերտոն եւ Ռոբերտ Լեանդոյակին, որ եզրափակեց Ռոբերտոյի փոխանցումը:

Կատալոնական ակումբը 59 կէտով կը շարունակէ գլխաւորել մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտով առաջ է 2-րդ տեղը գտնուող Մատրիտի «Ռեալէն»:

«Կադիսը» 22 կէտով 17-րդ տեղն է:

Ռեալն Արտագնայ 3ադթանակ Կը Տօնէ Օսասունայի Զետ Խաղէն Ետք

Մատրիտի «Ռեալը» յաղթանակ տարաւ Լա լիգայի 22-րդ հանգրուանի «Օսասունայի» դէմ արտագնայ խաղին: Փետրուարի 18-ին կայացած հանդիպումը աւարտած է 2-0 հաշուով՝ յօգուտ մատրիտեան խումբին:

78-րդ վայրկեանին Ֆեդերիկօ Վալվերդեն առաջ մղեց իր խումբին հաշուի մէջ, իսկ աւելցուած 2-րդ վայրկեանին Մարկօ Ասենսինոն ձեւակերպեց վերջնական հաշիւը լուսատախտակի վրայ:

«Օսասունան» ունի 30 կէտ եւ կը զբաղեցնէ տասներորդ տեղը:

Բունդեսլիգա. «Պաւարիան», «Պորուսիան» եւ «Եունիոնը» Զաւասար Կետ Ունին

Բունդեսլիգայի 21-րդ հանգրուանի արտագնայ խաղին «Պաւարիան» հիւրընկալուեցաւ Միոնչենգլադբախի «Պորուսիային»: Տանտէրերը յաղթեցին 3-2 հաշուով:

Հանդիպման ընթացքը կանխորոշեց «Պաւարիայի» պաշտպան Դայօ Ուպամեկանոյի հեռացումը խաղի 8-րդ վայրկեանին: «Պորուսիայի» կազմէն մէկական կոլի հեղինակ դարձան Լարս Շտիլդը, Յոնաս Հոֆմանը եւ Մարկուս Թուրամը: «Պաւարիայի» կազմէն կոլի հեղինակ դարձան Էրիկ-Մաքսիմ Զուպո-Մոտինգը եւ Մատիս Տիլը:

Պերլինի «Եունիոնը» սեփական յարկին տակ 0-0 հաշուով հաւասարեցաւ «Շալքի» հետ:

Դորտմունտի «Պորուսիան» սեփական յարկի տակ 4:1 հաշուով յաղթեց «Հերտային»:

Տանտէրերու կազմէն 27-րդ վայրկեանին հաշիւը բացաւ Կարիմ Ադէյեմին: 5 վայրկեան անց դորտմունտեան ակումբի առաւելութիւնը կրկնապատկեց Դոնիս Գալէնը:

Երկրորդ կէսի մեկնարկին հիւրերու կազմէն հաշիւը կրճատեց Լուկաս Տուզարը:

76-րդ վայրկեանին Մարկօ Ռոյսը հաշիւը դարձուց 3:1, իսկ 90-րդ վայրկեանին Յուլիան Բրանդտի խփած կոլը մեծ հաշուով յաղթանակ ապահովեց իր խումբի համար:

«Քիոլնը» մրցակիցի յարկին տակ 0-3 հաշուով գիջեց «Շտտուգարտին»: Հայաստանի հաւաքականի յարձակող Մարգրիս Ադամեանը հիւրերու կազմէն մասնակցեցաւ հանդիպմանը՝ դուրս գալով փոխարինման ընդմիջումէն յետոյ:

«Պաւարիան» 43 կէտով կը շարունակէ գլխաւորել Բունդեսլիգայի մրցաշարային աղիւսակը, երկրորդ եւ երրորդ տեղերը գտնուող Դորտմունտի «Պորուսիան» եւ «Եունիոնը» եւս ունին 43 կէտ:

Ախոյեաններու Լիկա.

«Միլան»-«Տոտենհեմ» 1-0, ՊՍԺ-«Պաւարիա» 0-1 «Պորուսիա»-«Չելսի» 1-0 «Բրիւզէ»-«Բենֆիկա» 0-2

Ֆուտպոլի Ախոյեաններու լիկային մէջ կայացան չորս հանդիպումներ՝ ՊՍԺ-«Պաւարիա», «Միլան»-«Տոտենհեմ», «Պորուսիա»-«Չելսի», «Բրիւզէ»-«Բենֆիկա»:

Փարիզի «Պարկ դէ Պրենս» մարզադաշտին մէջ կայացած խաղին ՊՍԺ-ը Միլանի «Պաւարիա»-ին, գիջեց նուազագոյն հաշուով: «Պաւարիա»-ի կազմէն միակ գնդակը 53-րդ վայրկեանին խփեց Կինգսլի Կոմանը:

Օրուայ միւս խաղին «Միլան»-ը տանը ընդունեց Լոնտոնի «Տոտենհեմ»-ին: Իտալական ակումբը յաղթանակի հասաւ 1:0 հաշուով: «Միլան»-ի յաղթական գնդակը խաղի 7-ր վայրկեանին խփեց Բրահիմ Դիասը:

Յաջորդ օրը՝ գերմանական «Պորուսիա»-ն, Դորտմունդի մէջ Լոնտոնի «Չելսի»-ին հետ խաղալով, առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով: «Մեղուներու» միակ գնդակը 63-րդ վայրկեանին խփեց Կարիմ Ադէյեմին:

Օրուան միւս խաղին «Պրիւզէ»-ն, տանը ընդունելով Լիսպոնի «Բենֆիկա»-ին, գիջեց 0:2 հաշուով: «Բենֆիկա»-ի կազմէն աչքի ինկան Ժոաու Մարիոն եւ Ներեսը:



Արսենալը Կամային 3ադթանակ Տարաւ Բիրմինգհեմի Մէջ



Անգլիայի Պրեմիեր լիգայի 24-րդ հանգրուանի խաղին Լոնտոնի «Արսենալը» յաղթեց Բիրմինգհեմի «Ասթոն Վիլային»:

Խաղը կայացած է Բիրմինգհեմի «Վիլլա Պարկ» մարզադաշտին մէջ փետրուարի 18-ին:

Տանտէրերու կազմէն կոլերու հեղինակ դարձան Օլի Ուոթկինսը եւ Ֆելիպե Կոուտինիոն: «Արսենալը» կազմէն կոլերու հեղինակներ դարձան Բուկայօ Մական, Ալեքսանդր Զինչենկոն, ինչպէս նաեւ Ժորժինիոյի հարուածէն յետոյ Մարտինսը (ինքնակոլ), իսկ խաղավերջին Մարտինսին:

4-2 Արսենալի սաները ընդհատեցին ԱՊԼ-ում առանց յաղթանակներու երեք հանդիպումների շարքը:

Այս խաղէն յետոյ «Արսենալը» կրկին գլխաւորեց Պրեմիեր լիգայի մրցաշարային աղիւսակը (54 կէտ), «Ասթոն Վիլան» մնաց 11-րդ տեղը (28 կէտ):

Մանչեսթեր Սիթին Կետեր Կորսնցուց Արտագնայ Խաղին

Անգլիայի Փրեմիեր լիգայի 24-րդ հանգրուանի խաղին «Մանչեսթեր Սիթին» ոչ-ոքի խաղացաւ «Նոթինգհեմ Ֆորեստի» հետ:

Խաղը տեղի ունեցաւ Նոթինգհեմի «Սիթի Գրաունդ» մարզադաշտին մէջ փետրուարի 18-ին:

Առաջին խաղակէսի վերջաւորութեան հիւրերը բացին հաշիւը. կոլի հեղինակ դարձաւ Բերնարդօ Սիլվան: Սակայն եզրափակիչ սուլիչէն մի քանի վայրկեան առաջ տանտէրերը խուսափեցան պարտութենէն՝ կոլ խփեց Բրիս Վուդը: Արդիւնքը՝ 1-1:

Այս հանդիպումէն յետոյ «Մանչեսթեր Սիթին» մնաց Փրեմիեր լիգայի մրցաշարային աղիւսակի 2-րդ տեղը (52 կէտ), «Նոթինգհեմը» բարձրացաւ 13-րդ հորիզոնական (25 կէտ):

«Մանչեսթեր Եունայթըտը» Կը Շարունակէ Անպարտելիութեան Շարքը

ԱՊԼ 24-րդ հանգրուանին «Մանչեսթեր Եունայթըտը» սեփական յարկի տակ 3 անպարտախան գնդակ ուղարկեց «Լեսթերի» դարպասը: Մանչեսթերեան խումբի կազմէն դուպլի հեղինակ դարձաւ Ռեյֆորդը, մէկ անգամ ալ աչքի ինկաւ Սանչոն:

Այս յաղթանակէն յետոյ ՄԻՌԻ-ն 49 կէտով 3-րդն է: «Լեսթերը» 14-րդն է 24 կէտով: